



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material





331.88(47)

Ա-22



Հոկտեմբերյան Հեղափոխության V-րդ սարկարձի
ստեղծարարի Ն. Ս. Խ. Հ. Կեկելուհան
Հանձնաժողով

Ա-22

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՒՐ ԶԵՐԿՐԵՐ, ՄԻՍՏԵՐ.

Հ. ԱԶԱՏՅԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ

Յ Ե Վ

ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ



1922

ՅԵՐԵՎԱՆ

35928-62

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՐԿԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄԸ

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալիստական հասարակութունն իր գոյության վերջին շրջանն է ապրում: 1914 թվին սկսած և այսօր շարունակվող համաշխարհային պատերազմը արտադրության կապիտալիստական յեղանակի անհրաժեշտ հետևանքն է, նրա ուժեղացման ու տարածման գործիքը: Կապիտալիզմը առանց գաղութային քաղաքականության անհնարին է, իսկ գաղութները յերկնքից չեն թափում և կապիտալիստական գործարաններում չեն թխվում: Նրանց կարելի չէ ձեռք բերել, նրանց ժողովուրդներին ճնշել ու նրանց հարստությունները սեփականացնել միայն բռնի ուժի միջոցով: Կապաալի առաջխաղացումն տեղի յե ունենում արդյունաբերական ճգնաժամերի ճանապարհով, իսկ վորպես վերջիններիս լուծման ամենաազդեցիկ ու ամենասուր գործիք պատերազմն է հանդիսանում:

Չափազանցության մեջ չենք ընկնի, յեթե ասենք, վոր կապիտալիստական պետության ձեռնում պատերազմը վոչ միայն միջոց է, այլ յեվ գոյության կովի հիմնական մեքողը:

Կապիտալիստական արդյունաբերության ապրած խոշորագույն ճգնաժամն առաջացրեց և մարդային պատմությանը հայտնի խոշորագույն պատերազմը: Սակայն, կապիտալի համար նոր շուկաներ ստեղծելու և նրա դիրքերն ամրացնելու փոխարեն, պատերազմը քայքայեց ամբողջ աշխարհի տնտեսութունը և երկրագնդիս բոլոր

անկյուններում ապրող շահագործվող ու դժգոհ տարրերին արթնացրեց ու վտառի կանգնեցրեց: Պատերազմի առաջացրած ծանր մթնոլորտում պրոլետարիատի կողմն անցավ յեվ աշխատավոր գյուղացիությունը: Պետություններ է միջեվ մղվող պատերազմին փաղափարակալուն պատերազմ հայտարարվեց: Վերջինիս նպատակն է՝ վերջ դնել կապիտալիստական հասարակությանը, վորի գոյության հիմնական պայմանը կազմում են ժողովուրդների կեղեքումն ու շահագործումն, արդյունաբերական ճգնաժամերն ու պատերազմները: Ըստ ճգնաժամի ու պատերազմի ընդունած չափերի, կապիտալի դեմ ուղղած կռիվն ել համաշխարհային բնույթ է ստացել և մղվում է վոչ թե հանուն կապիտալի հասցրած շարիքների մեղմացման, այլ հանուն կապիտալի վերացման ու կապիտալիստական հասարակության կործանման, հանուն արտադրության միջոցների ազգայնացման և կոմունիստական կարգերի հաստատման:

Հասարակությունները միմիանցեց տարբերվում են արտադրության այն յեղանակով, վորն իշխող է հանդիսանում տվյալ յերկրներում և տվյալ դարաշրջանում: Արտադրության նոր յեղանակին համապատասխան, արտադրության միջոցներն ել նոր գասակարգի սեփականություն են դառնում, վորն այժմ հենց այդ պատճառով իշխող գասակարգ է հանդիսանում:

Կապիտալիստական հասարակությունն այսօր նմանում է մի ծեր կաղնու, վորի կեղևն ամեն կողմից ճեղքեր է տվել, իսկ բունը— փտել: 1917 թվից սկսած, ամիս չի անցնում, վոր այդ ճեղքերից նոր ու նոր հեղափոխական կազմակերպություններ չյերևան: Իր ամենախոշոր ճեղքը բուրժուական հասարակությունը տվեց կապիտալիստական վեթխարի շենքի ամենաթույլ մասերից մեկում՝ Ռուսաստանում, վորի պրոլետարյան ու աշխատավոր գյուղացիությունը իրենց սեփականություն հայտարարե-

ցին յերկրի իշխանությունն ու հարստությունը, հերոսական քաղաքացիական կռվի միջոցով յերկրում իրենց անբաժան իշխանությունը՝ իրենց դիկտատուրան հաստատեցին և ձեռնարկեցին անտեսության ու հասարակական-քաղաքական կյանքի կազմակերպմանը՝ կոմունիստական հիմունքներով:

Հեղափոխության և իշխանության գլուխ անցած պրոլետարիատը առաջին հերթին պետք է արտադրության միջոցները ազգայնացման յենթարկեր և նրանց կապիտալիստական ոգտագործումն սոցիալիստականով փոխարիներ: Առաջին անգամ գասակարգային հասարակության պատմության մեջ, աշխատանքի կատարող դասակարգը միաժամանակ յեվ իշխող դասակարգ դարձավ: Ինչքան վոր ամեն մի հասարակության և պետության գոյության հիմքը նրանց անտեսության կազմակերպումն, նյութական պահանջների բավարարումն են հանդիսանում, իշխանությունն ստանձնած պրոլետարյատի բոլոր կազմակերպություններն առաջին հերթին այդ հոգսերով եյին զբաղվելու:

ԿԱՐՄԻՐ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԱՅՆ ԱՄՊԱՐԵԶՐ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԿԱՐԳԵՐՈՒՄ

Ռուսաստանի պրոլետարական հեղափոխությունն վերջ դրեց այն անդունդին, վոր համարյա բոլոր բուրժուական յերկրներում գոյության ունի բանվորության պրոֆեսիոնալ ու քաղաքական մարմինների մեջ: Մեր ինդերդային կարգերում բանվորությունը մի մարմին, մի բյուրեղացած դասակարգ է հանդիսանում և նրա բոլոր կազմակերպությունները միեվնույն նպատակի յեն արգտում՝ աշխատանքի դիկտատուրայի հաստատմանը: Գոյություն չունի անտեսություն առանց քաղաքականության գեների, ինչպես և քաղաքականություն— առանց տնտեսա-

կան նպատակներն ու ձգտումներն: Հոկտեմբերյան հեղա-
 փոխութեան ասպետը—Ռուսաստանի պրոլետարիատը—
 վոչ միայն շախշախեց բուրժուական կարգերը, այլ և
 վերջ դրեց բուրժուական կարգերում գոյութիւն ունե-
 ցող այն խոշոր տարածայնութիւններին, տարբերութիւն-
 ներին ու կռիւներին, վոր տեղի ունեն միեւնոյն բանվոր
 դասակարգի զանազան կազմակերպութիւններին մեջ,
 նրանց թուլացման մշտական աղբյուր են ծառայում
 և այդ պատճառով բուրժուազիայի կողմից ամենայն
 աջակցութեան արժանանում: Իր դիկտատուրան հաստ-
 ատած պրոլետարիատը չսեւնված արագութեամբ կազմա-
 կերպեց իր կոմունիստական կուսակցութիւնը, իր պայ-
 քամալուրական խորհուրդները յեվ իր արհեստակցական
 միութիւնները, նրանց բոլորի առաջ միյնելույն խնդիրը
 դնելով՝ կռիվ հակաեղափոխութեան դեմ, սնեստութեան
 կազմակերպումն սոցիալիստական հիմունքներով, իր ի-
 սխանութեան ուժեղացումն յեվ աշխատավոր դասակար-
 գերի նյութական ու բարոյական պահանջների բավա-
 րարումն: Խորհրդային յերկրներում տնտեսական կյանքի
 ու տնտեսական քաղաքականութեան ղեկը կոմունիստա-
 կան կուսակցութեան ձեռքումն է կենտրոնացած և նրա
 աշխատանքի առյուծային բաժինը, նրա առաջնակարգ
 հոգսերից մեկն է հանդիսանում: Ինչքան մեր կուսակ-
 ցութիւնը միայն քաղաքական կռիւ կազմակերպութիւն
 չէ, այնքան էլ մեր միութիւնները միայն տնտեսական
 կռիւ մարմիններ չեն: Նրանց ծագումն ու գոյութիւնը
 կապված են ամբողջովին այն մեծ աշխատանքի հետ, վոր
 հինգ տարվա ընթացքում նրանք կատարել են քաղաքա-
 ցիական կռիւ դաշտում, կոմունիստական կուսակցու-
 թեան և խորհուրդների գործունեութեան մեջ, արդյունա-
 բերութիւնը և մթերքների բաշխման գործը կազմակեր-
 պելու ասպարիզում: Խորհրդային յերկրներում չկա մի

կոմիսարիատ, մի քաղաքական մարմին, վորն իր գոր-
 ծունեութեան այս կամ այն ասպարիզում արհեստակցա-
 կան միութիւններին վրա չհենվի, նրանց ոգնութեանը
 չդիմի: Ժողովախորհի բոլոր բաժինները կապված են հա-
 մապատասխան միութիւնների հետ և նրանց հետ միա-
 սին է, վոր կազմակերպում են տնտեսութիւնը: Պարտոզ-
 կոմատի առաջնակարգ աշխատանքը բանվորութեան մթե-
 րային ապահովումն է հանդիսանում և այդ աշխատանքի
 կազմակերպումն ու կիրառումն միութիւնների և կոմի-
 սարիատի միացյալ ուժերով, նրանց փոխազարձ համա-
 ձայնութեամբ է տեղի ունենում: Աշխատանքի ուժի հաշ-
 վառութիւնն ու բաշխումը, ինչպես և աշխատանքի կո-
 միսարիատի ամբողջ գործունեութիւնը միութիւնների
 գեղավարութեամբ ու ոգնութեամբ է կատարվում, իսկ
 աշխատանքի կոմիսարը միութիւնների բարձրագույն
 մարմնի անդամ է և նրա թեկնածուն: Միութիւնների
 ներկայացուցիչը տնտեսական խորհրդակցութեան և պե-
 սալանի անդամ է: Միութիւնները մասնակցում են ֆին-
 ժողկոմատի հարկային ու բյուջետային աշխատանքներին:

Սակայն, մեր միութիւնների պետական աշխատանքը
 չի սահմանափակվում այն մասնակցութեամբ, վոր նրանք
 ունեն տնտեսական կոմիսարիատների գործունեութեան
 մեջ: Բանվոր դասակարգի ամենալայն ու մասսայական
 կազմակերպութիւնները հանդիսանալով, նրանք չեն կա-
 րող անպատասխանատու և չեզոք հանդիսատեսի դերում
 մնալ այն կռիւ հանդեպ, վոր մեր դիկտատուրայի ու մեր
 տնտեսական շինարարութեան դեմ մղում են հեղա-
 փոխութեան ներքին ու արտաքին թշնամիները: Այդ պատ-
 ճառով էլ մեր միութիւնների վրա սուրբ պարտականու-
 թիւն է ընկնում՝ զենքով կռիւ պրոլետարիատի դիկտա-
 տուրայի թշնամիների դեմ և ռազմաօդկամատին վերջի-
 նիս գործունեութեան մեջ ամենայն աջակցութիւն ցույց

տալ: Քաղաքացիական կռիւի ընթացքում Ռուսաստանի միութեանները հարյուր հազարավոր անդամներ սրբութեամբ կատարում ելին իրենց վրա զրած այս ծանր դասակարգային պարտականութիւնը: Մեր միութեաններն անագին դեր ունեն կատարելու հեղափոխական կռիւի մի այլ ֆրոնտում—բանվորադուրացիական տեսչութեան աշխատանքներում: Իսկ միթե միութեանները կարող են մասների արանքով նայել բժշկասանիտարական կամ կուլտուրական գործի կազմակերպմանը: Այս բոլոր և ուրիշ շատ ասպարեզներում Խորհրդային յերկրների արհմիութեանները համապատասխան կոմիսարիատներին նրանց գործունեութեան մեջ ամենայն աջակցութիւն են ցույց տալիս կամ նրանց աշխատանքներին անմիջապէս մասնակցում:

Իսկ բանվորների պատգամավորական խորհուրդները:—Նրանց հրավիրումը, կազմակերպումը, նրանց աշխատանքների ղեկավարութիւնը գտնվում են միաժամանակ կոմունիստական կուսակցութեան և արհմիութեանների ձեռքում: Բանվորական խորհուրդների բոլոր ընտրողներն ու պատգամավորները արհեստակցական միութեանների անդամներ են կամ նրանց անդամակցելու իրավունք ունեն:

Ել չենք խոսում կոմունիստական կուսակցութեան մասին: Վերջինս միութեանների գաղափարական ու քաղաքական ղեկավարն է, իսկ միութեանները—նրա ուժեղացման ու անմասն անսպաս աղբյուրը:

Կա մի բանվորութիւն, մի պրոլետարական դասակարգ: Կուսակցութեանը, խորհուրդները և արհմիութեանները այդ մեծ մարմնի համարժեք որդաններն են, միևնույն նպատակին են ծառայում: Նրանք միմիանցից բաժանվում են միայն աշխատանքի բաժանման սկզբուն-

քով, ինչպես այդ տեղի ունի մեր բազմաթիւ կոմիսարիատների միջև, վորոնք բոլորը միևնույն նպատակին են ձգտում, միևնույն աստիճան ծառայում:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԱՐՃԵՍԱԿՑԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԳԻՐԸ

Խորհրդային յերկրների արհմիութեանների առաջ պատմութիւնը բազմաթիւ հարցեր է դրել լուծելու: Այդ հարցերից մեծագույնը մեր միութեանները կոմունիստական հասարակութեան կազմակերպումն են համարում: Յե՛վ այլ կերպ չէր ել կարող լինել, քանի վոր Խորհրդային յերկրներում բանվորների և ծառայողների մոտ 80 տոկոսը արհմիութեաններում է գտնվում, իսկ արդյունաբերութեան վորոշ ճյուղերում համարյա բոլոր բանվորներն ու ծառայողները միութեան անդամ են: Բայց չէ՞ վոր այդ նույն բանվորները— միութեանների անդամները— միաժամանակ և ամենից առաջ այն դասակարգի անդամներն են, վորը իր զիկտատուրան է հաստատել և ձգտում է կոմունիստական հեղափոխութեան կատարյալ հաղթանակին ամբողջ աշխարհում: Հրաժարվել զիկտատուրայից և կոմունիստական հեղափոխութեան աշխատանքն իրենց գործունեութեան հիմք ունենալուց— նշանակում է հրաժարվել վոչ միայն միութեանների գործունեութեան բոլոր մյուս կողմերից, այլ և միութեանների գոյութեան հնարավորութեանից: Ահա թե ինչու Խորհրդային յերկրների բանվորները իրենց արհմիութեանների կանոնադրութեան առաջին կետին հետևյալ ձևակերպումն են տալիս.

§ 1. «Կանգնած լինելով պրոլետարիատի միջազգային դասակարգային կռիւի հսկի վրա, (այս ինչ) բանվորների յե՛վ ծառայողների արհմիութեանները, կազմակերպելով բանվորական լայն մասսաները յե՛վ նրանց սոցիալական շինարարութեանը մաս-

նակից անելով, իր նպատակն է համարում սոցյալիզմի իրականացումն պրոլետարյատի գիհհասուրացի միջոցով:»

Կարմիր արհմիությունների ծրագրի այս պարզ ու կարուկ, հեղափոխական ձևակերպումն բավական է համեմատել առաջնակարգ կապիտալիստական յերկրների բանվորական միությունների համապատասխան կետի հետ, վորպեսզի մեր առաջ բացվեն այն խոր անդունդն ու սկզբունքային տարբերությունները, վոր գոյությունն ունեն արհեստակցական շարժման յերկու հիմնական ուղղությունների միջև:

«Սոցիալիզմ պրոլետարիատի ղեկատաոււրացի միջոցով» — ահա մեր արհեստակցական աշխատանքի հիմքն ու նպատակը: Այսինքն, մեր արհեստակցական միություններն այն տեսակետի վրա են կանգնած, վոր կապիտալիստական հասարակության օրջանակներում յեկ կովի խաղաղ մեթոդներով բանվորի ազատագրումն անհնարին է: Այդ նպատակի իրականացումն պահանջում է սոցիալիստական կարգերի հաստատումն, իսկ այդ կարգերին հասնելու միակ ճանապարհը հեղափոխական կռիվն է, բուրժուազիայի տապալումն և բանվոր դասակարգի անբաժան իշխանությունը՝ նրա ղեկատաոււրան:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՐՋԵՍ. ՇԱՐՓՄԱՆ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Յեվրոպայի և Ամերիկայի միությունները կանգնած են վոչ թե հեղափոխության, այլ բարենորոգումների հողի վրա: Նրանք, ինչպես ասում են, ունենալով ստանալու են: Արևմտյան արհեստակցական շարժումը դեռ այն ուսուցիական անսակեայից և յեղում, վոր կապիտալի իշխանության որով, բուրժուական հասարակարգի պայմաններում, բանվորի նյութական ու քաղաքական ազատագրումն հնարավոր է: Ճիշտ է, Յեվրոպայի և Ամերի-

կայի միությունների մի մասը բանվորի վերջնական ու կատարյալ ազատագրումն միայն սոցիալիզմից է սպասում, սակայն այդ կարգի միություններն ել ձգտում են հասնել սոցիալիստական կարգերին պարլամենտական կովի և իրենց նյութական ու բարոյական դրության աստիճանական բարվոքման միջոցով: Փաստորեն, սոցիալիզմը նրանց համար միայն դատարկ բառ է, անիրականալի յերազ կամ իրենց դուռն իրականությունը ծածկող մի գարգարանք: Նրանք ամբողջովին կապիտալիզմի հողի վրա են կանգնած և հաճախ ժխտում են նույն իսկ դասակարգային կռիվը: Վերջին տեսակի միություններ շատ կան մասնավանդ Ամերիկայում: Իսկ 1914 թվից սկսած, պատերազմի հենց առաջին օրից, արևմտյան համարյա բոլոր միությունները հրաժարվեցին դասակարգային կովի մեծ սկզբունքից ու լայն ազատագրական ճանապարհից և կանգնեցին հակահեղափոխական ազգային տեսակետի վրա, միանալով ավյալ յերկրի բուրժուական կուսակցություններին: Նրանք պատերազմի պաշտպան ու հենարան հանդիսացան և այդպիսով հրաժարվեցին նույն իսկ իրենց անցյալից՝ նրանք բուրժուազիայի ձեռքում խաղալիք դարձան:

Ինչքան մեր յերկրի բուրժուազիան ավելի թալան կատարի ուրիշ յերկրներում, ինչքան մեր պետությունն ավելի գաղութներ նվաճի ու ժողովուրդներ կեղեքի, այնքան մենք ավելի աշխատանք կունենանք, այնքան մեր աշխատավարձի հավելումների ավելի հնարավորություններ կստեղծվեն — ահա նրանց փրիստոփայության հիմնաքարը: Հեռուողական լինելով, նրանք պաշտպանում են ավյալ յերկրի բուրժուազիայի ամբողջ արտաքին քաղաքականությունը, բուրժուազիայի անսանձ իշխանության դեմ չեն բողոքում և այդ նեղ շրջանակներում

միայն կովում են հանուն աշխատավարձի հավելման, աշխատանքի ժամերի կրճատման և այլն:

Այդ ծրագրին ու տակտիկային համապատասխան, նրանց միությունների կանոնադրությունները լուծյան են մասնում և կռիվը դասակարգային հողի վրա և պրոլետարիատի դիկտատուրան ու կոմունիզմը: Նրանց կանոնադրությունների առաջին՝ ծրագրային կեսը խոսում է միայն բանվորների նյութական ու բարոյական դրության բարվորումից աշխատավարձի հավելումով և փոխադարձ ոգնության միջոցով:

Հարցը լիովին պարզաբանելու համար, լսենք այդ շարժման յերկու գիտնական ներկայացուցիչներին: Անգլիայի Տրեդ-յունիոնների (արհմիությունների) հայտնի թեորեթիկ ու պատմաբան Ուեբբ ամուսինների ձեվակերպումով, արհմիությունը «բանվորների յերկարատեվ միացում է, նրանց աշխատավարձը պահպանելու յեվ բարձրացնելու նպատակով:»

Ուրիշ բառերով, բայց ըստ եյության նույնն է առում Ավստրիայի արհեստակցական շարժման պատմաբան՝ Յուլիյ Դեյչը: Նրա ձևակերպումով. «Արհմիությունը վորոշ արհեստի բանվորների միացումն է, սպասակ ունենալով պաշտպանել նրանց շահերը յեվ առաջին հերթին կռվել հանուն աշխատանքի պայմանների բարվորման»:

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ:

Առաջնակարգ կապիտալիստական յերկրներում պրոլետարյառ կազմում է ավյալ յերկրի ընդհանուր ազգաբնակչության 50-ից մինչև 80 տոկոսը, Անգլիայում դեռ մի քիչ ավելի: Սակայն, նրա ապրած նյութական ու բարոյական պայմանները, ինչպես և նրա մասնակցությունը

ավեալ յերկրի քաղաքական կյանքին բոլորովին չեն համապատասխանում վոչ նրա թվին և վոչ նրա մեծ դերին յերկրի արդյունաբերության մեջ: Նրա կազմակերպական յադախական ազատարարականներն այնքան միայն գոյություն ունեն, յնչյան վոր նա չի սպասնում բուրժուազիայի հետևար սրբարյուն—սրբոց կազմող սեպտականությանն, ինչքան վոր բուրժուազիայի հանդեպ իրան պարկեշտ է պահում և իր դասակարգային կովում վորոշ շրջանակներին դուրս չի դալիս: Վորոշ պրոֆեսիայի բանվորների ու ծառայողների շատ յերկրներում բոլորովին թույլ չի արվում արհեստակց, միյություններ կազմակերպելու և իրենց այդ տարրական իրավունքը նրանք կարողանում են ձեռք բերել տասնյակ տարիներ տևող կռվի թանկ ու արյունոտ գնով: Այդ թվին են պատկանում առաջին հերթին յերկաթուղու և նավատորմի բանվորները, ուսուցիչները և փոստ-հեռագրական ծառայողները:

Արևմտյան արհեստակցական շարժման ապրած պայմանների մի շատ բնորոշ ու վտանգավոր կողմն էլ նրանում է կայանում, վոր բուրժուազիայի դիկտատուրայի որով բանվորության նվաճումներից և վոչ մեկը չի կարող ապահով համարվել: Ամեն մի խոշոր գործադուլի և առհասարակ դասակարգային սուր կռվի ընթացքում բանվորությունը կարող է կորցնել մի շարք նվաճումներ, վոր նա ձեռք է բերել տասնյակ տարիներ տևող ծանր ու գոհաբերություններով հարուստ կովով: Այդ է պատճառը այն տարրինակ յերևույթի, վոր դեռ այսօր էլ Ցեվրպայի ու Ամերիկայի բանվորությունը գործադուլով և կռվի ալ միջոցներով պահանջում են 8—ժամեա բանվորական օր, գործարանային կոմիտեներ կազմակերպելու իրավունք, ապահովագրումն գործազրկության կամ տկարության դեպքերում, մայիսի մեկի ցույցի ազատություն և այլն և այլն:

Չնչին բացառութիւններով, Արևմուտքում մինչև պատերազմը արհեստակցական շարժումն այս նեղ շրջանակներում եր ընթանում: Բանվորական լայն մասսաների դրութիւնը այնքան դանդաղ կերպով ու այնքան աննշան չափով եր բարձրվում, բանվորները պետութիւնն անտես- սական-քաղաքական կյանքում մասնակցելու և նրա վրա ազդելու այնքան քիչ իրավունք և հնարավորութիւն ունեցին և միութիւններն այնչափ անոգնական դրութիւնն մեջ ելին ու մասսաների մասին այնքան չնչին հոգս ելին տանում, վոր ուժեղանալու ամեն մի հնարավորութիւնից զուրկ ելին: Միութիւնների կորիզը կազմում ելին բարձր կվալիֆիկացիայի բանվորները, բանվորական արհատ- կրատյան, որը և կենտրոնացնում եր ձեռքում միութիւնն ամբողջ կյանքը, ծառայեցնելով նրան իր շահերին ու նպատակներին:

Պարզ ե, վոր նման պայմաններում միութիւնները չեին կարող մասսայական կազմակերպութիւններ դառնալ: Յե՛վ նրանց պատմութիւնն ու նրանց անգամների դրութիւնը պատերազմի նախորդակին այդ շարժման ծրագրի ու կռվի մեթոդների համար մի սպանիչ վկայա- գիր ե: Պատերազմի նախորդակին, ամբողջ աշխարհի արմիութիւններում կազմակերպված եր մոտ տասն միլիոն (10,000,000) բանվոր ու ծառայող, մի թիվ, վորին այդ շարժումն արժանացել եր իր 150-ամյա գո- յութիւնն ընթացքում:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Պատերազմի հետևանքով առաջացած կոտորածն ու քաղցը ստիպեցին Յե՛վրոպայի բանվորական մասսաներին վերադնահատման յանթարկել իրենց ծրագիրն ու կռվի

եղանակները, ըննադատական վերաբերմունք ցուցադրել դեպի իրենց դիրքը բուրժուական հասարակութիւնն պայ- մաններում: „Մե՛ծ ժողովուրդները, ինչպես և մե՛ծ դա- սակարգերը ամենից լավ իրենց սեփական սխալների վրա են սովորում“, գրում եր նման մի ասիթով պրո- լետարիատի մե՛ծ ուսուցիչ Ֆր. Ենգելսը:

Այդ ժամանակ վրա հասավ հակամբերյան հեղափո- յութիւնը, վորը փոթորկեց ամբողջ աշխարհը և ամե- նակարճ ժամանակում մուսաստանի ահազին տարածու- թիւնն վրա իսկական հրաշալիքներ գործեց: Խորհրդային Ռուսաստանի արհեստակցական շարժումն այդ հրաշա- լիքների շարքում առաջին տեղերից մեկն ե բռնում: Հնարավորութիւնն չունենալով կանգ առնելու այստեղ այդ շարժման պատմութիւնն վրա, կասենք միայն, վոր արմիութիւնների 4-րդ համառուսական համագումարի պատգամավորները միութիւնների մոտ ութ ու կես մի- լիոն (8,485,800) անդամ ելին ներկայացնում: Այսինքն, յերեք տարվա ընթացքում (1918—1921) Խորհրդային Ռուսաստանի միութիւններին հաջողվել եր կազմակեր- պել համարյա նույնքան բանվոր, ինչքան ամբողջ աշ- խարհի միութիւններին 150 տարվա ընթացքում: Վերջերս կատարած կրճատումների հետևանքով, այդ թի- վըն այժմ նվազել ե մոտ մի երրորդով, սակայն այդ նվազումն չպետք ե արհեստակցական շարժման թուլաց- մանը վերագրել, քանի վոր աշխատող բանվորների և ծառայողների 90 տոկոսը արհեստակցական կազմակեր- պութիւնների մեջ ե գտնվում:

Արտադրութիւնն կապիտալիստական յեղանակը իր գոյութիւնն և իր տարածման համար լայն ասպարեզ, թե՛ տարածութիւններ ե պահանջում: Այժմ նրա տրամա- դրութիւնն տակ ե ամբողջ յերկրագունդը: Աշխարհիս բո- լոր յերկրները հազարավոր թելերով կապված են կապի-

տալի կենտրոնների հետ: Ինչ վերաբերում է իրենց՝ կապիտալիստական յերկրներին, նրանց կապը միմյանց հետ և նրանց կախումը միմյանցից այնքան մեծ է, արդյունաբերական—առևտրական և կուլտուրական հարաբերությունները նրանց մեջ այնքան խիտ ցանց են կազմում, վոր նրանցից ամեն մեկի շեղումացած, առանձնացած գործությունը միանգամայն անհնարին է: Ահա ինչու բուրժուազիակ հասարակարքյակ մեջ տեղի ունեցող բոլոր հաշտ հետադարձությունները միջազգային բնույթ են ստանում: Այս յերևույթը մանավանդ ուժեղ արտահայտում էր ստանալու հոկտեմբերյան հեղափոխություն շրջանում, վորը կատարվեց կապիտալիզմի զարգացման զագաթնակետի պայմաններում և պատերազմի հետևանքով առաջացած սնտեսական քայքայման ու ամբողջ աշխարհի ծայրահեղ դժգոհություն որբերում: Մարդկային հասարակության պատմության մեջ հոկտեմբերյան հեղափոխությունը խոշորագույն փոթորիկն է թե իր ծավալով և թե իր խորությունը ու իր առաջ դրած վսեմ համաշխարհային ազատագրական նպատակներով: Ինական փոթորիկներն անգամ յերբեք այդ ծավալն ու գործությունը չեն ստացած և չեն ել կարող ստանալ, քանի վոր նրանց տարածումը սովորաբար մի ուղղությունը է կատարվում:

Հակառակ բուրժուական պատմափիլիսոփայության բոլոր պատգամներին ու որենքներին, հոկտեմբերի այլքները հրատարակեցին ճանաչել վորև է պետական կամ բրնական սահման, վոտնատակ տվին բոլոր բազաբական ու աշխարհազրական—բնական արգելքները և ալեկոծված ովկիանոսի հոտանքների նման ծածկեցին աշխարհիս ամեն անկյուն, վորտեղից շահագործվողների, ճնշվածների ու թշվառների ազադակներ էլին գալիս: Պետություն, ազգ, կրոն, գիտական-հասարակական թեորյաներ, սո-

ցիալիստական ծրագրներ ու պրոֆեսիոնալ շարժման յեղանակներ—հոկտեմբերյան դնացքի հաղթական առաջխաղացման առաջ ամեն ինչ խոնարհեց իր գլուխը: Յեթե բուրժուական գասակարգերը միայն 1921 թվի վերջին իրանց պարտված հայտարարեյին և 1922 թ. հունիսին փաստորեն ընդունեցին Սորհրդային իշխանության գոյություն պատմական անհրաժեշտությունը, զգայուն ըսկոյորական մասսաներն ու աշխատակոր գյուղացիորյունը յորհրդային կարգերի կողմնակից դարձան: Հոկտեմբերյան փոթորիկի հետց յերկրորդ արդ. „СОВЕТ“ բառը միջազգային բազաբացիություն իրավունք ձեռք բերեց, Սորհրդային կարգերը, Ռուսաստանի Կոմունիստական կուսակցություն և արհեստակցական միությունների ծրագրները, կազմակերպչական յեղանակներն ու աշխատանքի հեղափոխական մեթոդները ճնշվածների ու շահագործվողների շարքերում ամենուրեք որինակելի ճանաչվեցին, նրանց ձգտման միակ առարկան հայտարարվեցին: Բոլոր յերկրների բանվորներն ու աշխատավոր գյուղացիները ձեռնարկեցին տենդային կազմակերպչական աշխատանքի և ամբողջ աշխարհը ծածկեցին այդ յերկու գասակարգերի հեղափոխական մարմիններով: Յեվ պետք է ասել, վոր այդ մատայական կազմակերպչական աշխատանքը կյանքի վոշ մի ասպարիզում այնքան հալթանակներ շտարավ, ինչքան արհեստակցական շարժման մեջ:

35928-62
82655

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՍԻԹՅԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՀԵՍՏ. ՇԱՐՇՄԱՆ ՎՐԱ

Ինչպես վերև հիշեցինք, իր գոյություն 150 տարվա ընթացքում բոլոր յերկրների արհեստակցական շարժումը կարողացել էր ընդամենը մոտ տասն միլիոն բանվոր ու

ծառայող կազմակերպել: Հոկտեմբերյան հեղափոխության կատարած ամենախոշոր միջազգային հրաշքներից մեկն էլ այն էր, վոր նրա անմիջական ազդեցության տակ ու նրա գաղափարական ղեկավարության մեջ այս կարճ ժամանակամիջոցում բոլոր յերկրների պրոֆեսիոնալ կազմակերպված բանվորների թիվը ասան միլիոնից մոտ հիսուն միլիոնի բարձրացավ: Մանավանդ նշանակալից է այն հանգամանքը, վոր այդ կազմակերպությունները մի յերրորդն արդեն հեղափոխական-դասակարգային հոգի վրայ է կանգնած, իր ամբողջ աշխատանքում Ռուսաստանի միությունների որինակին է հետևում և կարմիր պրոֆեսիոնալ ինտերնացիոնալի մեջ է մտնում: Կասկածից դուրս է, վոր առաջիկա տարիների ընթացքում կրկնապատկվելու յե պրոֆեսիոնալ կազմակերպված բանվորության թիվը և յեռապատկվելու ու քառապատկվելու կարմիր պրոֆեսիոնալ ինտերնացիոնալի կողմնակիցների թիվը:

Բավական է ասել, վոր միայն Գերմանիայում կազմակերպված բանվորների ու ծառայողների թիվը այս կարճ ժամանակաշրջանում երկու միլիոնից բարձրացավ մինչև տասն և երեք միլիոն (13,000,000)*, իսկ Հայաստանի նման հետաձուլաց յերկրում, ուր մինչ խորհրդային կարգերի հաստատումն ժխտում էյին նույնիսկ բանվորի գոյությունն ու նրա հեղափոխական կազմակերպությունների հնարավորությունը, դաշնակցականների այդ «անարատ» յերկրում արդեն 1921 թվի հուլիսին մոտ 25,000 բանվոր ու ծառայող կար կազմակերպված: Երճատումների շնորհիվ այդ թիվն այսօր 40 տոկոսով նվազել է, բայց և այնպես մի յերկրի վերաբերմամբ, ուր մինչ հոկտեմբերյան հեղափոխությունը 15 կազմակերպված բանվոր չկար և վոչ մի արհեստակցական միություն, չի կարելի չըն-

* Գերմանիայի բանվորների և ծառայողների ընդհանուր թիվը 65 տակոսը.

դունել, վոր 15,000 պրոֆեսիոնալ կազմակերպված բանվորներն ու ու ծառայողները մի իսկական պատմական հրաշք և հոկտեմբերյան հեղափոխության անխուսափելի վերջնական հաղթանակի անժխտելի ապացույց են ներկայացնում:

Կապիտալիստական Գերմանիայի 13 միլիոնանոց, անտեսապես հետամնաց ու փոքրիկ Հայաստանի 15 հազարանոց և ամբողջ աշխարհի 50 միլիոնանոց պրոֆեսիոնալ կազմակերպված բանվորությունը մի գորեղ բանակ է, վոր կարող էր առաջանալ միայն Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցության տակ: Նման ույժ չեյին կարող առաջացնել վոչ հրեաների ահարկու աստված Յեհովայի վորոտն ու շանթը, վոչ Մովսեսի գավազանը, վոչ քրիստոնեություն սուրբ հոգին և վոչ յերկրորդ ինտերնացիոնալի թշվառացած ու սնանկացած հանճարը:

Գերմանիայի արմիություններն այսօր հերոսական կռիվ են մղում գործարանային կոմիտեներ և նրանց համագումար կազմակերպելու շուրջը: Իտալիայի միությունները, 1919 թվի աշնանից սկսած, գործում են „по-русски“, զինված ուժով տիրանում գործարաններին և լայն չափեր ստացած քաղաքացիական կռվի միջոցով պաշտպանում իրենց դիրքերն ու նոր դիրքեր գրավում: Փաշխտները, — այսինքն իտալական խուլիգանություն — շարժումը բանվորության հեղափոխական կռվի անմիջական հետևանքն է: Անգլիայի միությունները պահանջում են հանքերի ու երկաթուղիների ազգայնացում և արդեն այնքան են ուժեղացել, վոր կարողանում են 1,200,000 մարդու գործադուլ կազմակերպել, վորը տեվում է համարյա չորս ամիս: Մեզ հայտնի գործադուլներից դամենախոշորն է: Արդեն 1916—17 թվականներին նույն միությունները կռիվ սկսեցին գործարանային կոմիտեներ կազմակերպելու շուրջը, իսկ այսօր պահանջում են, վոր

գործարանային կոմիտեներին արդյունաբերութեան վրա հսկելու իրավունք տրվի: Ամերիկայի միություններն անգամ, վոր քաղաքական կյանքից իրանց այնքան հեռու էյին պահում, արդեն քաղաքացիական կռվի շրջանն են մտել: Յերկաթուղու վերջերս գործադուլ արած բանվորները զենքի ուժով էյին պաշտպանում իրենց պահանջները, իսկ ամխանները բանվորները վերջերս կազմակերպեցին մեզ հայանի ամենախոշոր գործադուլներից մեկը, վոր տեվեց հինգ ամիս, 600,000 մարդու մասնակցութեամբ:—Այսօր չկա մի կապիտալիստական յերկիր, վորի բանվորական կյանքը նման բազմաթիվ որինակներ չտար:

ՉԵՁՈՒՔՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՆԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ԿԱՐՄԻՐ ԱՐՉՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հոկտեմբերյան հեղափոխությունը պատուեզ արհեստակցական շարժման նեղ շապիկը, դեն շարտեց այն և արհմիությունների՝ առաջ տնտեսական, քաղաքական ու կուլտիւրիական գործունեութեան լայն ասպարեզ ու հեռու հորիզոններ բացեց:

Խորհրդային յերկրներում մի հարվածով լուծվեց և միությունների շեղոթութեան հարցը, մի հարց, վոր ծանր քարի նման կախված է արևմտյան միությունների վզից: Այդ հարցը մեզ մոտ այլ ևս վեճի առարկա անգամ կազմել չի կարող, քանի վոր միությունները պրոլետարյատի գիկատաուերայի հիմքն ու վողնաշարն են կազմում, իրենց ամբողջ աշխատանքով ուժեղացնում են այդ գիկատաուերան և հազարավոր թելերով կապված են կոմունիստական կուսակցութեան ու Խորհրդային մարմինների հետ: Մեր միությունները նպատեանում են նրանով, վոր չնգոյ չեն, վոր կոմունիստական շինարարութեամբ են դբազ

ված և կոմունիստական կուսակցութեան դեկավարութեամբ են գործում:

Մեզ մոտ մի անգամ ընդմիշտ լուծված ենան միությունների այսպես կոչված անկախութեան կամ ավտոնոմիայի հարցը: Ծիծաղելի ու անբնական կլիկեր, յերթե բանվորական կազմակերպութեանները ձգեցին անկախութեան մեռյ քերել հանդեպ իրենց սեփական կուսակցութեան յեղ իրենց սեփական իշխանութեան: Նման հարցեր կարող են միայն կապիտալիստական յերկրներում առաջանալ, ուր դասակարգային հողի վրա կանգնած միությունները ձգտում են ազատվել իշխանութեան և մանր բուրժուական-սոցիալիստական կուսակցությունների միջամտութեանից իրենց գործունեութեանը:

ԲԱՆՎՈՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՎՈՔՄԱՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԲՈՒԹՈՒՆԿԱՆ ՈՒ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Յեվրոպայի և Ամերիկայի արհմիությունները իրենց յերկրների տնտեսական ու քաղաքական շինարարութեան գործով դբազվել չեն կարող, քանի վոր այնտեղ և արտադրութեան միջոցները և քաղաքական իշխանությունը բուրժուական դասակարգերի մենաշնորհն են կազմում: Մեր արևմտյան ընկերների ամբողջ աշխատանքը նրանում է կայանում, վոր բանակցությունների և գործադուլների միջոցով նրանք կրճատում են աշխատանքի ժամերը, բարձրացնում աշխատավարձը, փոխադարձ ոգնութեան մարմիններ ստեղծում, բանվորների պետական ապահովագրումն կազմակերպում և այլն:—Մեր կարմիր արհմիությունների առաջ նման հարցերը բոլորովին այլ հողի վրա յեն դրվում: Նրանց իրականացման շուրջը մեր

միություններն այլ ևս քաղաքական կռիվ չեն մղում: Մեր միտքը պարզաբանենք մի որինակով:

Ութ ժամյա բանվորական որվա հարցը, վոր արևմուտքի արհեստ, շարժման կենտրոնն է հանդիսանում և վորի շուրջը դեռ համառ, թանկարժեք ու զոհերով հաբուս: կռիվ է աշխատեց մղվում, մեզ մոտ արդեն լուծված է: Վորպես աշխատանքի մաքսիմալ ժամանակ, Սորհրդային յերկրների որենսդրությունն ընդունում է ութ ժամ, իսկ կոմունիստական կուսակցության ծրագիրը պահանջում է արտագործական ուժերի և յերկրի տնտեսական դրության բարձրացման պայմաններում աշխատանքի որը վեց ժամի հասցնել: Ինչքան մեր բանվորն ու արհմիությունները ավելի կնպաստեն մեր արնտեսական կյանքի ուժեղացմանը, ինչքան մենք ավելի հարստություն կստեղծենք, այնքան էլ ավելի հնարավորություն կլինի աշխատանքի պարտադիր ժամանակը կրճատելու: Պարզ է ի հարկե, վոր իրենց դասակարգի ու իրենց դասակարգային իշխանությունը դեռ մեր միտքում և իրենց կռիվը յնև կարող, քանի վոր իր ամբողջ էությունը Սորհրդային իշխանությունը բանվորներին շահագործել չի կարող: Չեղբ-ձեղբի տված Սորհրդային իշխանության հետ, մեր միությունները պետք է մասնակցեն յերկրի տնտեսական կյանքի վերականգման գործին և այդ ճանանապարհով բավարարեն իրենց անդամների թե նյութական և թե կուլտիւրական պահանջները: Մեր միտքում և իրենց յեզ յնև կարող չի կարող իր կոյնակ քարձրության փրկ կանգնած հանարվել, յեքե շինարարական սեղծագործական աշխատակից չի կասարում, յեքե յորհրդային իշխանության նեցուկ ու ոժանդակող ուժ չի հանդիսանում յեզ միայն իր անդամների դրության բարձրման մասին, է մտածում: Չեղածը պահանջել չի կուրելի և վոչ մի հրաշագործ չեղածից մեզ վոչինչ չի կա-

բող բաժին հանել: Ահա ինչու մեր միությունները պահանջները պետք է համապատասխանեն յերկրի նյութական միջոցներին և իրենց կառարած ստեղծագործական աշխատանքին: Ռուս ժողովրդի «ինչ կցանես, այն էլ կրհնձես» իմաստուն առածը մեր միությունների գործունեության յերակեան է կազմելու:

1904—6 թվականներին Ռուսաստանի համարյա ամբողջ արդյունաբերական պրոլետարյատը 8 ժամյա բանվորական որ ձեռք բերեց, սակայն արդեն 1907—8 թվերից սկսած, սեղծագործական ուժեղացման հետ միասին, ֆարրիկանտները և կառավարությանը զրկեցին նրան այդ մեծ նվաճումից: Մեծ զոհողություններով ու դժվարություններով ձեռք բերած նվաճումների կորուստը մի սովորական յերևոյթ է բոլոր կապիտալիստական յերկրներում: Այն ինչ յորհրդային կարգերում 8 ժամը ընդունվում է միայն վորպես աշխատանքի մաքսիմալ ժամանակ և համապատասխան որենքը յաշխատողներին մեր քրեյական որենսդիրը ասենախիստ պատասխանաժողության է յենթաբուհում, դատապարտելով նրանց թե բանտարդելության և թե դրամական տուգանքի: Մեր որենքը, դասարանը, միլիցիան, կարմիր բանակը, բանվորա-գյուղացիական սեչուրյունը յեզ աշխատակի կոմիսարյատը կոչված են պատկանելու բանվորության յեզ աշխատակոր գյուղացիության շանը, սրանց աշխատակի պատկանելու: Այդ ասպարեղում կոչելու, ժամանակ ու յեռանդ կորցնելու, նյութական ծախսեր անելու անհրաժեշտությունից մեր միությունները կատարելապես ազատ են: Աշխատավոր մասնանների բարեկեցության գործին և աշխատանքի շահերի պաշտպանությանն է նվիրվում և վերև չհիշած բոլոր մյուս կոմիսարյատների ու յորհրդային կազմակերպությունների գործունեությունը: Սորհրդային իշխանության և Սորհրդային որենքի հովանու տակ արհեստ-

տակցական միութիւններին հնարավորութիւնն է տրվում իրենց ամբողջ ուշժն ու լեռանդը շինարարական գործունեութեան նվիրել:

Ութժամյա բանվորական որի հարցը մի համագեղացին զորինակ է, վորի վրա կույրերն անգամ պետքն տեսնեն այն խոր անգունդը, վոր գոյութիւնն ունի մեր արհեստչարժմանն և կապիտալիստական յերկրների արհեստակցաշարժման մեջ:

Մեզ մտա նույն զբութիւննն է տիրում և աշխատանքի պաշապանութեանը վերաբերյալ բոլոր մյուս հարցերում: Այսինքն, յերկրի արտադրական ուղծելիս յեվ ճեշտակակ միջոցներին հատկապատահումն՝ Խորհրդային Իշխանապրաւնը, ալիւս. մ արքունիների ոգևորչակն ու մասնակցորչակն, բարձրացնուսե բանվորի գոյորչակն նյորպակն ու բարոյակակն մակարդակը: Աշխատանքի ժամերի կրճատումը յերիտասարդ բանվորներին համար մինչև վեց ժամ, արդյունաբերութեան վասնգավոր ճյուղերում հասակավորների համար մինչև 7 կամ 6 ժամ, արտաժամյա աշխատանքի սկզբունքային ժխտումն, իսկ ժամանակավորապես նրա ծայրանեղ սահմանափակումն, շաբաժական 42 ժամ անընդհատ հանգիստ, հզի կանանց համար 4 ամսյա արձակուրդ, տալով նրանց իրենց ամբողջ հասանելիքը, ձրի բժշկութիւնն և ուժեղ անունգ, տարեկան արձակուրդ բոլոր բանվորներին ու ծառայողներին, աշխատանքի տեսչութիւնն, վոր ընտրվում է արհմիութիւններին կողմից, բանվորների սոցյալական ապահովագրումն և տասնյակ նման բարենորոգումներ, հաստատած որենսդրական ճանապարհով— ահա ինչ է անում Խորհրդային Իշխանութիւնը բանվորների համար, նրանց առաջ դրական-ստեղծագործական աշխատանքի անսահման հորիզոններ բացելով:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՍՈՅՅԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄՆ

Խորհրդային յերկրների ներկա տարվա հաջող բերքը և նրանց տնտեսական ու ֆինանսական զբութեան նշանավոր բարելավումն բանվոր դասակարգի իշխանութեանը հնարավորութիւնն տվին բանվորների սոցյալական ապահովագրման մի հոյակապ շենք կառուցել, վորի նմանը չունի և վոչ մի կապիտալիստական յերկիր: Բոլոր պետական, հասարակական ու մասնավոր ձեռնարկներն ու հիմնարկներն, ուր վարձու աշխատանք է գործադրվում, որենքով պարտավորվում են աշխատավարձի վորոշ տոկոսը մուծել աշխատանքի կամխարչատին կից կազմակերպված ապահովագրական գանձարկղը: Այդ մեծ աշխատանքը կատարվում է արհմիութիւնների ակտիւզակակն մասնակցորչակն յեվ նրանց ղեկիւստար գաղափարակակն ղեկավարորչակն:

Ներկա հոկտեմբերին ընդունած որենքով, Հայաստանի բոլոր ձեռնարկներն ու հիմնարկներն, ըստ աշխատանքի տեխնիկական պայմանների, նրա զժվարութեան կամ նրա ներկայացրած վտանգի, չորս կարգի յեն բաժանվում, վճարելով ոտձիւրերի գումարի 14-ից մինչև 18 և կես տոկոսը: Այդ գումարից 2 տոկոս նշանակվում է գործագուրկների ապահովագրման համար, $4 - 5^{1/2}$ տոկոս բժշկական ոգնութեան համար, $3 - 4^{1/2}_{/0}$ ինվալիդութեան և մահվան դեպքերի համար, $5 - 6^{1/2}_{/0}$ աշխատանքի ընդունակութիւնից ժամանակավորապես զրկվելու, ծննդաբերութեան և նման այլ դեպքերի համար:

Գործագուրկների պետական ապահովագրումն գոյութիւնն չունի և վոչ մի կապիտալիստական յերկրում: Ապահովագրման մյուս տեսակները— բոլորը միասին կամ նրանցից մի քանիսը— գոյութիւնն ունեն Գերմանյայում և մի քանի ուրիշ բուրժուական պետութիւններում,

սակայն գործն այնտեղ բոլորովին այլ հիմունքների վրա
յե դրած, համապատասխան այդ յերկրներում գոյություն
ունենցող դասակարգային փոխհարաբերություններին:

Բուրժուական յերկրներում ազանովագրության ծախ-
սի մի յերրորդից մինչև յերկու յերրորդը, իսկ Ռուսի-
նիայում ամբողջ 100 տոկոսը բանվորներն են կատարում,
այն ինչ խորհրդային յերկրներում— նրանց քվում յեղ
Հայաստանում— այդ գործի վրա բանվորն ու ծառայողը
վոչ մի կոպեկ չեն ծախսում: Վերեվ բերած տոկոսները
վճարվում են բացառապես հիմնարկների և ձեռնարկների
կողմից:

Ուշագրության և արժանի մասնավանդ այն հանգա-
մանը, վոր այդ մեծ սոցյալական գործի կիրառումն ու
յեկավարությունը մեզ մոտ ամբողջովին բանվոր դասա-
կարգի ձեռքում և կեղևներում հանձնես նրա աշխա-
տանքի կոմիսարյատի և արհմիությունների: Մասնավոր
ձեռնարկողները պարտավոր են վճարել իրենցից պահանջ-
վող տոկոսները, սակայն ապահովագրման գործին մի-
ջամտելու իրավունքից կատարելապես զուրկ են:

Խորհրդային յերկրների տնտեսական կյանքի առաջ-
խաղացման հետ միասին ավելի ամուր հիմքերի վրա
կդրվի և բանվորության ապահովագրման գործը: Վերև
բերածս տոկոսներն ել կբարձրացվեն վոչ պակաս, քան
մինչև 30: Բանվորության գրությունը բարձրացնելու
ամեն մի հարց կախված է մեզ մոտ տվյալ խնդրի լուծ-
ման նյութական հնարավորությունից և վոչ թե վճարելու
կամ չվճարելու ցանկությունից, ինչպես այդ բուրժուա-
կան յերկրներում տեղի ունի:

**ՊԱՀԱՆՁԻ ՈՒ ԳԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՌՎԻ ՓԵՆԱՐԵՆ՝ ՇԻ-
ՆԱՐԱՐԱԿԱՆ ԳԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

Բանվոր դասակարգի բոլոր պահանջներն, վորոնց
բավարարման համար կապիտալիստական յերկրների

բանվորները տանյակ տարիներ շարունակ ապարդյուն
արյուն ու քրտինք են թափում, մեզ մոտ իրենց լուծումն
են ստանում խաղող ճանապարհով՝ որենադրության մի-
ջոցով: Խորհրդային իշխանության համար ամբողջ հարցը
նրանում է կայանում, թե իր գանձարանն ու իր պա-
հեստները այդ պահանջները բավարարելու վորքան հնա-
րավորություն են տալիս:

Պահանջն ու կռիվը, վոր արեվմսյան արհմիություն-
ների շարժման վոզին են կազմում, մեզ մոտ բացակա-
յում են, սեղ սալով կազմակերպական ու ստեղծա-
ժործական աշխատանքի ցանկացած, քաղաքական ու
կուլտուրական ասպարեզներում: Խորհրդային յերկրնե-
րում պահանջն ու կռիվը գոյություն ունեն բանվորու-
թյան համար միայն մասնավոր ձեռնարկների վերաբեր-
մամբ, սակայն անհամեմատ ավելի նվազ չափով, քան
այդ կապիտալիստական յերկրներում տեղի ունի: Չե՛
վոր մեր աշխատանքի կողքը (որենագիրը) տարած-
վում է և մասնավոր ձեռնարկների բանվորների վրա:
Չե՛ վոր մեր դատարանը, միլիցյան, կարմիր բանակը,
Խորհրդային բոլոր մյուս կազմակերպությունները, կո-
մունիստական կուսակցությունը և մամուլը մասնավոր
ձեռնարկների բանվորներին նույնքան են պաշտպանում,
ինչքան և խորհրդային ձեռնարկներում աշխատողներին:
Պրոլետարյատի զիկտատուրայի պայմաններում մասնա-
վոր կապիտալը ժամանակավոր յերեույթ է, գործում է
այն սահմաններում, վոր նրա համար գծագրում է Խոր-
հրդային իշխանությունը, պարտավոր է ի կատար ածել
աշխատանքի պաշտպանության բոլոր որենքները և յեր-
բեք չի համարձակվի բանվորության վրա դասակարգային
հարձակում գործել: Յեթե վորոշ մասնավոր ձեռնարկնե-
րում մեր բոլոր որենքները չեն կիրառվում, դրա պատ-
ճառը մեր արհմիությունների թուլության մեջ է փրնտ-

ընդուն: Ով նման յերևույթները Խորհրդային կարգերին
ե վերագրում, նա Խորհրդային կարգերից, պրոլետա-
րյատի դիկտատուրայից վոչինչ չի հասկացել:

**ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՅԵՎ ՏԵՂԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐ: ԲԱՆՎՈՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մեր միությունների առաջ տասնյակ հարցեր են դր-
վում, վոր բուրժուական յերկրների բանվորության հա-
մար գոյություն չունեն կամ նրա առաջ չափազանց սահ-
մանակ չափով են գրվում: Մեր առաջ գործունեության
ամենալայն ասպարեզներ են բացվում, վորոնց բոլոր
դռները մեր արեմտյան ընկերների համար փակ են:

Կազմակերպչական ու կուլտուրական աշխատանք,
տարիֆային հարց, հավաքական պայմանագրեր, սոցյա-
լական ազատագրում, աշխատանքի շուկա, աշխատանքի
ինսպեկցիա, մասնակցություն մեր անտեսական կոմիտար-
յատների աշխատանքներին, բանվորական խորհուրդների
ընտրություններ, կոնֆլիկտների լուծում, աշխատանքի
պայմաններին վերաբերյալ որենտրություն և նման բազ-
մաթիվ հարցեր միությունների համար գործունեության
այնքան լայն ասպարեզ են բացում, վոր նրանց արդյու-
նավետ աշխատանքը հնարավոր է միայն մի պայմանով,
վոր նա ամբողջ մասսայի սեփականությունը կազմի և
միաժամանակ կենտրոնացած լինի:

Միություն չի այն միությունը, վոր իր ամբողջ
հույսը վարչության վրա է դնում կամ—ինչպես հաճախ
նկատվում է.—իր բոլոր գործերը քարտուղարի ձեռքում
կենտրոնացնում: Ամենափոքր միությունն անգամ ար-
դյունավետ աշխատանք չի կարող կատարել, յեթե իր
վիճակն ամբողջովին քարտուղարի ձեռքն է հանձնում,
մասնավանդ, յեթե վերջինս բյուրոկրատական ձգտումներ

ունի: Ամեն մի միություն պետք է հաճախ ընդհանուր
ժողովներ հավաքի, իր աշխատանքի գլխավոր կողմերին
վերաբերյալ մի քանի հանձնաժողով կազմի, ամեն մի
հիմնարկի և ձեռնարկի բոլոր բանվորների ու ծառայող-
ների ընդհանուր ժողովներ ունենա և վոր գլխավորն է—
իր տեղկոմիտեի աշխատանքը ամուր հիմքերի վրա դնի,
նրանց ուժեղացնի, բանվորների և ձեռնարկողների կամ
խորհրդային հիմնարկների վարիչների աչքում նրանց հե-
ղինակությունը բարձր պահի:

Մեր միությունների կյանքում տեղկոմիտեները չափա-
զանց կարևոր տեղ են բռնում: Առանց նրանց աջակցու-
թյան միությունները անգոր են լայն ու հաջող գործու-
նեյություն ունենալ: Տեղկոմիտեի կսկումն է, վոր սվյալ
հիմնարկում կամ ձեռնարկում անշեղ կասարվե: աշխա-
տանքի պաշտպանությանը վերաբերյալ բոլոր դեկրետներն
ու վոչոչումները, մակամակնո բանվորների ընդունելու-
թյան յեղ արձակման դեպքում: Հաշվափակն պաշտա-
նագրի բոլոր պահանջների բավարարումն հնարավոր է
այնտեղ միայն, ուր ուժեղ տեղում կա, գիտակից յեղ գոր-
ծին նվիրյաժ անդամներով: Տեղկոմը ուսումնասիրում է
նաև արտադրության պայմանները տվյալ ձեռնարկում
և պարբերաբար զեկուցում այդ մասին իր միության
վարչությանը կամ քարտուղարին: Սակայն, տեղկոմի
պարտականություններն այդքանով չեն սահմանափակվում:
Ամեն մի ձեռնարկում կամ հիմնարկում բանվորն ու
ծառայողը վոչ միայն վորոշ իրավունքներով են ոգավում,
վորոնց պաշտպանությունը տեղկոմի վրա է ծանրանում,
այլ նրանք ունեն և բազմաթիվ պարտականություններ:
Բանվորին առաջապանող որեկքն ու հաշվափակն պաշտա-
նագրերը նրան պարտավորեցնում են բարեխիղճ աշխա-
տել, դեպի հում նյութը, գործիքներն ու մեքենաները
խնայողական վերաբերմունք ունենալ և պահանջած ժա-

մանակին իրան հանձնած գործը ավարտել: Կապիտալիստական յերկրներում արհմիությունները նման հարցերով շատ քիչ են հետաքրքրվում: Այնտեղ բանվորները գործ ունեն ուրիշի սեփականություն հետ, իրանց շահագործողի պատվերներն են կատարում: Սակայն խորհրդային հիմնարկներում բանվորը իր դասակարգի, իր պետություն, ուրեմն իր սեփական գործն է կատարում և դեպի իրան հանձնած աշխատանքը նույն բարեխիղճ, նույն ուշադիր վերաբերմունքը պիտի ունենա, ինչ յեվ գյուղացին դեպի իր դաշտն ու բուսանը, գեպի իր գութանն ու յեզը: Կապիտալիստական յերկրներում բանվորի ուսին անթիվ անհամար պարտականություններ են ծանրացած և միայն ծանր ու յերկարատե կռվի միջոցով է, վոր նրան հաջողվում է ձեռք բերել իր ամենատարրական իրավունքները, շատ թե քիչ շահով իր ու իր միությունների գոյությունն ապահովել: Հոկտեմբերյան հեղափոխությունը կատարող և իր դիկտատուրան հաստատող բանվորությունը նման հոգսերից կատարելանպես ազատ է: Օժտված լինելով բոլոր քաղաքական ու քաղաքացիական իրավունքներով և իր կազմակերպչական ու կուլտիվացիական աշխատանքի համար ամենալայն ազատություններ և արտունություններ վայելելով, Խորհրդային յերկրները բանվորությունը հնարավորություն ունի իր ույժն ու յեռանդը ստեղծագործական աշխատանքի նվիրել՝ կյանքի վոր ասպարիզում էլ նա գործելու լինի: Մեր բանվորի և մեր բանվորական կազմակերպությունների համար իրավունքի հարցը այլ ևս գոյություն չունի՝ նա պատմության արխիվն է հանձնած: Հոկտեմբերյան հեղափոխությունը մեր առաջ մի բոլորովին նոր հարց բարձրացրեց, այն է՝ ձեռք բերած իրավունքներն սգտագործելու, այդ իրավունքներով մեզ վրա դրած պարտականությունները կատարելու հարցը: Մեզ մոտ չկա իրավունք առանց պար-

տականության, ինչպես յեվ պարտականություն առանց համապատասխան իրավունքի: Նման անհեթեթ ու անբնական դրությունն գոյություն ունի կապիտալիստական յերկրներում, ուր բանվորը հարուստ է պարտականություններով և ազատ իրավունքներից, այն ինչ իշխող դասակարգերը իրենց սեփականություն են դարձրել ամեն մի իրավունք, բանվորություն ուսին բարձելով բոլոր պարտականությունները:

Բանվորությունը մեզ մոտ իշխող դասակարգ է հանգիստանում և յերկրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական վիճակի ամբողջ պատասխանատվությունը նրա վրա է ծանրանում՝ աշխատավոր գյուղացիության հետ միասին: Մեր բանվորների, կարմիր զինվորների ու աշխատավոր գյուղացիների շարքերում այս միտքը համապատասխան նվաճումներ դեռ չի կարողացել կատարել: Բանվորության մի մասը դեռ շարունակում է կերակրվել այն ժամանակի հոգեբանությունով, յերբնա ստրուկ էր, գուրկ ամեն իրավունքից յեվ իր գրություն բարվոքմանը միայն պահանջի, սպանոյիքի և գործադուլի միջոցով եր հասնում:

Մեր միությունների վարչություններն ու քարտուղարները, ինչպես և ամեն մի գիտակից բանվոր իրենց սուրբ պարտականությունն են համարելու՝ այս միտքը բոլոր բանվորների ուղեղում մեխել, նրանց բոլորին մարտել տալ, նրանց հոգեկան աշխարհի անբաժան սեփականությունը դարձնել: Սմենքից առաջ միությունների գործարանային ու տեղային կոմիտեները, վորպես բանվորական մասսային ու նրա աշխատանքի պրոցեսին ամենամոտ կանգնած մարմիններ, պետք է լավ գիտակցեն, վոր Խորհրդային իշխանության պայմաններում բանվոր դասակարգի շահերի հետևողական ու լավագույն պաշտպանը այն տեղկոմն է միայն հանդիսանում, վորի

ամբողջ գործունեությունն անկյունաքարը այստեղ մեզ
 զբաղեցնող զբուխունն է կազմում, այն տեղիումը, վորը
 վոչ թե ձգտում է պահանջներ առաջադրելու ճանապարհով
 բանվորների համակրությունը նվաճել, նրանց դուր
 գալ, սակայն նրանց վոչինչ չաալ, այլ այն սեղիումը,
 վորը հսկում է բանվորական օրենսդրության յեվ հավախական
 պայմանագրերի անճեղ կիրառմանը յեվ միաժամանակ
 նպաստում արդյունաբերության ու արտադրողական
 ուժերի բարձրացման գործին:

Ինչքան ավելի կբարձրացնես արդյունաբերությունը
 բանակով և վորակով, ինչքան ավելի բարիքներ կարտադրես,
 ինչքան աշխատանքդ ավելի արդյունավետ կլինի,
 այնքան քո նյութական ու հոգեկան պահանջները բավարարելու
 ավելի հնարավորություն կստեղծես—ահա ինչպես
 է մոտենալու բանվորներին տեղիումի ամեն մի գիտակից
 ու խորհրդային կարգերին նվիրված անդամը:

ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ

Հոկտեմբերյան Հեղափոխության առաջին տարիներում,
 մինչև 1921 թվի գարունը, մեր տեղիումները ծանրաբեռնված
 էին մի շարք այլ պարտականություններով, վորոնցից
 նրանք ներկայումս ազատ են: Մինչև այսպես կոչված
 նոր տնտեսական քաղաքականության հաստատում,
 բանվորների և ծառայողների ընդունելությունն ու
 արձակումն առանց տեղիումների համաձայնություն չե՞ր
 կարող տեղի ունենալ, իսկ հաճախ կատարվում էր միայն
 նրանց միջոցով: Միաժամանակ, տեղիումները իրավունք
 ունեյին միջամտելու և հսկելու արդյունաբերական գործերին
 և հիմնարկների համարյա բոլոր աշխատանքներին:
 1921 թ. գարնանից սկսած, տեղիումներն ազատեն այդ

ծանր պարտականություններից և այս հանգամանքը դեռ
 այսօր էլ շատերի կողմից ընդունվում է, վորպես միությունների
 և տեղիումների զրկումն իրենց պատկանող ամենախոշոր
 իրավունքներից, իրենց գործունեությունն հիմնաքից:
 Այս տեսակետն այնքան սխալ է և միությունների
 աշխատանքին այնքան վնաս է հասցրել, վոր այստեղ չի
 կարելի նրա վրա կանգ չառնել:

Հեղափոխության առաջին շրջանում և քաղաքացիական
 կռիվի ամբողջ ընթացքում, Խորհրդային իշխանություն
 առաջ կանգնած խոշորագույն խնդիրը հակահեղափոխության
 ջանքերի դեմ էր կազմում: Արդյունաբերության բոլոր
 ճյուղերում խոշոր ու միջակ ձեռնարկներն անվերջ
 աղգասնացման էյին յենթարկվում: Քաղաքացիական
 կռիվի ստեղծած դաժան պայմաններում Խորհրդային
 իշխանությունը զուրկ էր ամեն մի հնարավորությունից՝
 իր կենտրոնական ու նահանգային մարմինների միջոցով
 թե սեփականազուրկ անել գործարանատերերին և թե
 հազարավոր ձեռնարկներում կազմակերպել արտադրող
 յունք և նրա վրա վրա պահանջված հսկողությունն ունենալ:
 Խորհրդային մարմինների հետ միասին, այդ ծանր
 ու բարդ գործը կատարում էյին արհեստակցական միություններն
 ու նրանց տեղային մարմինները: Գեկըներներով չէ,
 վոր հեղափոխությունը կատարվում է: Ինքը բանվորական
 մասան է, վոր փողոց դուրս յեկավ և իր ձեռքն առավ
 իշխանությունն ու արտադրության միջոցները: Ուստաստանի
 նման մե՞ծ, հետամնաց, անասացես քայքայված ու
 հաղորդակցության միջոցներով աղքատ յերկրում,
 մի յերկրում, ուր խոշոր գործարանային
 արդյունաբերությունը մի քանի շրջանում էր միայն
 հաստատված և ուր բանվորությունն ու ղյուղայինությունը
 զեռ շատ թույլ էյին կազմակերպված, քաղաքացիական
 կռիվ պայմաններում կենտրոնական իշխանությունը չէր

կարող այդ մեծ գործը սեփական մարմինները միջոցով կիրառել: Նման պայմաններում Խորհրդային իշխանության համար մի յեղք կար միայն՝ պահելով իր ձեռքում գործի ընդհանուր ղեկը, նրա կիրառման մեջ միությունների տեղական մարմիններին մասնակից անել:

Այդ հանգամանքը մեր հեղափոխության մասսայական բնույթի ամենահամոզեցուցիչ ապացույցներից մեկն է:

Սակայն, նման ազակենտրոնացումն գործարանային արդյունաբերության համար ժան է: Նույն իսկ բուրժուական յերկրներում, ուր գործարանները մասնավոր սեփականություն են կազմում, առևտրա-արդյունաբերական կապիտալը կազմակերպում է իր տրեստներն ու սինդիկատները, վորպեսզի հնարավորություն ունենա կանոնավորել արտադրությունը և գիմանալ շուկայի մրցմանը: Կենտրոնացումն առավել ևս անհրաժեշտ է Խորհրդային իշխանության պայմաններում, վորովհետև այդ իշխանությունը ղեկավարում է յերկրի ամբողջ տնտեսական կյանքը և կազմակերպում է արտադրությունը ազգայնացման յենթարկած հազարավոր խոշոր ու միջակ ձեռնարկներում: Արտադրության արագիւթն միջամեյուր իր նախկին ճանկցիաներից սեղկամբ պետք է հրաժարվեք, քանի վոր նա չի կարող սեղյակ լինել վոյ արդյունաբերության յեվ վոյ Եուկայի պայմաններին: Այդ մեծ գործը կազմակերպելու և նրան ղեկավարելու համար հազարավոր տեղկոմներ պետք է իրենց համագումարները հրավիրելին և այնտեղ մի կենտրոնական մարմին ընտրելին, վորը իր վրա վերցնեք արդյունաբերության կազմակերպումը: Բայց չէ վոր մեր Խորհրդային իշխանությունն և արհեստակցական միությունների կենտրոնական մարմինները հենց այդ ճանապարհով են առաջ յեկել, այնպես վոր անմտություն կլինեք նույն պրոցեսը նորից կրկնել: Ում այս միտքը հասկանալի չէ, նա թող

հետեի գործարանային կոմիտեների շարժմանը Գերմանիայում և մասամբ Անգլիայում: Այդ յերկրների հազարավոր գործարաններում սկսած նման շարժումն է միայն, վոր կքայքայի կապիտալիստական հասարակությունը և Խորհրդային կարգեք կհաստատի: Իսկ այդ կարգերը հաստատելուց հետո գործարանային կոմիտեների նվաճած բոլոր ղիրքերի և իրավունքների միակ տնորենը նրանց կենտրոնական մարմինը՝ Խորհրդային իշխանությունը կարող է հանդիսանալ:

ԿԵՐՄԻՐ ՊՐՈՑԵՍԻՈՆԱԼ ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼԻ I ՀԱՄԱԳՈՒՄԸՐ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԽՆԳԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հեղափոխական արմիությունները առաջին միջադային համագումարը, վոր հավաքվեց Մոսկվայում 1921 թ. ամառը, հանձնարեց միջազգային պրոլետարյատին կազմակերպել գործարանային կոմիտեներ, նրանց առաջ մի շարք շափազանց կարևոր խնդիրներ ղնելով: Համամի շարք շափազանց կարևոր խնդիրներ ղնելով: Համագումարում միաձայն ընդունած թեղիոների համաձայն, գործարանային կոմիտեները հաշվառության են վերցնում գործարանների հուս նյութերը և վորոշում նրանց արտադրական հնարավորությունները, ցուցակադրում գործազուրկներին, կազմակերպում աշխատանքի շուկան և գործազուրկներին ապահովում ֆաբրիկանտների հաշվին, կազմակերպում են վառելիքի բաշխումը արդյունաբերության և բանվարների սեփական կարիքների համար, իրենց հսկողությունն են հաստատում հազորակցության ճանապարհների վրա, գործարանների ու բանկերի ֆինանսական միջոցների վրա, ապրանքների ներմուծման ու արտահանման գործի վրա և այլն: Այս առաջարկների իմաստը նրանումն է կայանում,

վոր բուրժուական հասարակութունը իր քայքայման շրջանն է սպրում և անընդունակ է ծրագրած կազմակերպութուն տալու, ասրանքների թե արատաղությանը և թե նրանց բաշխմանն ու տեղափոխմանը: Այս ճանապարհով կապիտալիստական յերկրները պրոլետարիատը պետք է թեթևացնի իր դրությունը, անտեսական կյանքը կազմակերպելու և նրան ղեկավարելու բնգունակութուն ու փորձառութուն ձեռք բերի և պահանջած մոմենտին կարողանա արդյունարեքական կյանքն ու շուկան իր ձեռքն առնել:

Նույն թեգիսներում համագումարը հայանում է, վոր գործարանային կոմիտեների այդ ֆունկցիաները նրանց միայն ժամանակավորապես են պատկանելու, մինչև վոր արհմիությունները կուժեղանան և այդ ամբողջ գործը իրենց ձեռքում կը կենտրոնացնեն: Այդ մոմենտից սկսած, ասվում է թեգիսների 3-րդ կետում, «գործարանային կոմիտեները հանդիսանում են, վորպես արհմիության բջիջը ձեռնարկության մեջ»: Այդ յեղանակով կազմակերպած գործարանային կոմիտեները, կարմիր արհեստակցական միությունների ասաջին միջազգային համագումարի հեղինակավոր կարծիքով, իրենց նպատակ են դնելու քայքայել բուրժուական հասարակությունն ու նրան հետևող ղեղին արհմիությունները, վորպեսզի իրենց դասակարգի ձեռքը հանձնեն անտեսական ամբողջ կյանքը և պրոֆեսիոնալ շարժումը դասակարգային, ուրեմն և հեղափոխական հողի վրա դնեն:

Պորհրգային յերկրների արհմիությունների ներկայումս վարած քաղաքականությունը շատերի համար ամիսներ շարունակ հասկանալի չեք դառնում, մանավանդ այն հանգամանքի շնորհիվ, վոր մեր գործարանային կոմիտեներն ու արհմիությունները ընդ քաղաքականության եյին հրավիրվում հենց այն ժամանակ, յերբ հեղափոխա-

կան արհմիությունների և միջազգային համագումարը կապիտալիստական յերկրները պրոլետարյատի համար ծրագրում եր մի գործերակերպ, վորից մեր միությունները պետք է հրաժարվեյին և ներկայումս բոլորովին հրաժարված են: Հարցը նրանումն է, վոր արևմտյան բանվորությունը ղեռ բուրժուական կարգերում է սպրում և նրա արհմիությունների յերկու յերրորդը բուրժուազիայից անկախ դասակարգային քաղաքականություն չեն վարում: Այդ պատճառով ել այնտեղի գործարանային կոմիտեները, վորպես միակ հեղափոխական, միակ դասակարգային հողի վրա կանգնած ու մասսայական բանվորական կազմակերպություններ, իրենց վրա ֆունկցիաներ են վերցնում, վոր ավելի կազմակերպված ու ավելի նպատակահարմար կերպով կարող են կիրառել Պորհրգային իշխանությունն ու արտազրոդական արհմիությունների կենտրոնական մարմինները: Իսկ 1921 թվի հուլիսին, յերբ տեղի ուներ և համագումարը, Ռուսաստանում հակահեղափոխությունը վերջնականապես ջախջախված եր, Պորհրգային իշխանությունն ամբողջի և խոր արմատներ եր թողել, արհմիություններն ել ուժեղ կենտրոնացած կազմակերպություններ եյին դարձել: Մեր սխորքալենների նոր փաղափակները պոլ թե նրաժարակալի և կուժակեղովից, այլ սկեստակալի նոր փաղափակները պուժուական սկեստակեղից բոլորովին փաղափակները, վոր սխաժաժակակ սարացույց է պրոլետարական հեղափոխությունի հարակալի յեղ արհեստակցական շարժակալի ուժեղացուակ:

ՎՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԸՆՎՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՐՑԸ

Բանվորները ընդունելության և արձակման գործում տեղիումները նույնպես «երավազրկման» յենթարկվեյին:

Քանի վոր միությունները թույլ եյին և աշխատանքի հաշվառութեան ու բաշխման բաժինները անկազմակերպ, այդ մեծ գործը միայն գործարանային կոմիտեներին կարելի եր հանձնել: Հակահեղափոխությունը ջախջախելուց և քաղաքացիական կռիվը վերջանալուց հետո, խորհրդային իշխանությունն ու արհմիությունները պահանամեր կազմակերպած ու կենտրոնացած աշխատանքի հնարավորություն ստացան: Աւելանալի շուկան կազմակերպելու հարցը արդյունաբերության ամենախոռո ու կարեւոր հարցերից մեկն է յեվ ընդհանուր պէտական նշանակություն ունի, մանավանդ վոր նրա հետ կապված է յեվ գործազուրկների ապահովագրման գործը, վոր միայն պետության ուժերով կարող է կազմակերպվել ու տարվել: Այս հարցի լուծումն վեր է ամեն մի գործարանային կոմիտեի ուժերից ու միջոցներից: Չկա և չի կարող լինել մի գործարանային կոմիտե, վորը աշխատանքի շուկան կազմակերպելու պատասխանատվությունն իր վրա վերցնէր: Իսկ այնտեղ, ուր վորտէ պարտականություններ կատարելու և պատասխանատվութեան յերաշխիքը բացակայում է, իրավունքները մասին խոսք լինել չի կարող:

Աշխատանքի բորսան և գործակուրդների ապահովագրման գործը կենտրոնացած են աշխատանքի կոմիտարյատում: Պետական մարմինն անցավ այն, ինչ վոր միայն պետութեան ուժերով կարող է տարվել:

Արդյոք բանվորութեանը դրանով զրկվեց իր իրավունքներից:

Ի հարկե՛ վոր: Աշխատանքի կոմիտարյատը նույն բանվորների պատգամավորական խորհուրդների միջոցով կազմակերպված ու նրանց յենթակա մարմին է: Միաժամանակ, աշխատանքի կոմիտարը և նրա տեղային ներկայացուցիչները արհմիությունների թեկնածուներն են:

Աշխատանքի բորսայի կոմիտեն, ապահովագրման խորհուրդը և ապահովագրման դրամակրկները կազմակերպվում են արհմիությունների անմիջական մասնակցութեամբ ու գործում նրանց ընդհանուր ղեկավարութեամբ: Այդ հիմնարկների վարիչների մեծամասնութեանը արհմիությունների թեկնածուներն են:

Հետեւապես, միաբյուրեւերն ու նրանց սեյկամները վոչ թէ զրկվել են վորոք իրավունքներից, այլ իրենց սուղ դրամ հարցերը ավելի կազմակերպված, ավելի ծեազրած կերպով են լուծում: Միայն բանվորական զիկտատարայի ու խորհրդային իշխանութեան թշնամիները, անարխիստները և հարցին անտեղյակ մարդիկ կարող են պահանջել, վոր, սրինակ, յերկաթուղու վիճակն ամբողջովին յերկաթուղու բանվորների ձեռքը հանձնվի կամ «Աւարտ» ու Ալլանվերդի գործարաններին վերաբերյալ արտադրողական ու առևտրական հարցերը այդ գործարանների բանվորները կամ նրանց միությունները լուծեն: Յերկաթուղին և հիշյալ յերկու գործարանը ընդհանուր պետական նշանակութեան ունեն: Նրանց վիճակի համար խորհուրդների համազումարի առաջ պատասխանատու է խորհրդային իշխանութեանը: Միությունների կենտրոնական մարմինները մասնակցում են պետական այն բոլոր որդանների մեջ, վորոնք մշակում ու լուծում են արդյունաբերութեանը, հաղորդակցութեան միջոցներին, շուկային ու ֆինանսներին վերաբերյալ հարցերը:

Կրկնում ենք, տեղկոմների գործունեութեանը ներկայումս հատկացրած շքանակները միայն մի բան են ապացուցում, այն է՝ խորհրդային իշխանութեան և արհմիությունների ուժեղացումն, պրոլետարական զիկտատարայի հաստատումն: Բանվորների իրավազրկման մասին խորհրդային կարգերում խոսք անգամ չի կարող լինել: Ներկա դեպքում տեղի ունեցավ նույն առաջադի-

մական պրոցեսը, ինչ և կարմիր բանակի շարքերում: Ինչքան վոր դեռ գոյություն ուներ հին բանակը կամ կարմիր բանակի հրամանատարական կազմը հին սպաներից դեռ չէր մաքրվել, խորհրդային իշխանությունն ել դեռ մի ախպիսի ույժ չէր ներկայացնում, վոր կազմակերպված կերպով և իր մարմինների միջոցով կտարեր կարմիր բանակի հավաքման ու գաման գործը, կոմանդիրների ընտրության և մի շարք այլ հարցեր վաշտերի ու գնդերի ընդհանուր ժողովներն էլին լուծում: Սակայն, հին գործը կազմալուծելուց և նրա սպայական կազմից ազատվելուց հետո, անհրաժեշտ էր կարմիր բանակի մի կենտրոն ստեղծել: Կարմիր բանակը կուվում է ներքին ու արտաքին հակահեղափոխության դեմ, մի գործ, վոր խորհրդային իշխանության գոյության հիմնաքարն և կազմում: Նման հարցերի լուծումն ամեն մի վաշտի կամ գնդի հանձնել նշանակում է յերկրում նույնքան տեսակի ներքին ու արտաքին քաղաքականություն վարել, քանի վաշտ ու գունդ կա այդ յերկրում: Այսինքն, դա նշանակում է ամեն ինչ կազմալուծել, հեղափոխության վրա խաչ դնել կարմիր բանակը կարող և միայն կենտրոնական իշխանությանը յենթարկվել և նրա քաղաքականությունը պաշտպանել: Այդ պատճառով էլ, կոմանդիրներն այսոր վոչ թե ընտրովի, այլ նշանակովի յեն:

Սակայն, միթե գրանով մեր կարմիր բանակը գրավվել է իր իրավունքներից: Ի հարկե՛ չե: Նրա կոմանդիրներին նշանակողը սպառնական գործերի կոմիսարյանն ու ժողկոմիտորն են, վորոնք ընարված են խորհուրդների կողմից, իսկ կարմիր բանակն, իր ամբողջ կազմով, մասնակցում է մեր խորհուրդների ամբողջ գործունեությանը: Ի՞նչն և ուրեմն փոխվել: Պարզ է, վոր խորհուրդների միջոցով կարմիր բանակը շարունակում է իր կոմանդիրների ընտրությանը, բայց կազմակերպված կերպով

ու կենտրոնացած ճանապարհներով՝ համապատասխան այն պահանջներին, վոր հեղափոխությունը դնում է խորհրդային պետության առաջ: Կարմիր բանակի առանձին մասերի հետ նույնը կատարվեց, ինչ և գործարանային կոմիտեները հետ:

ՏԵՂԿՈՄՆԵՐԻ ՆԵՐՎԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՎՈՐՈՒՄ ԶԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ՀԵՂԹԱՆԱԿԻ ՀԵՏԵՎԱՆՔ

Անհրաժեշտ ենք համարում կանգ առնել այստեղ մի հարցի վրա էլ, վորը հաճախ թյուրիմացությունների աղբյուր է ծառայում: Առանձին արմիրությունների և նրանց տեղկոմների գործունեության շրջանակները սանձափակումն այն ժամանակ տեղի ունեցավ, յերբ նոր անտեսական քաղաքականության հիմքն էր դրվում: Փամանակի այդ գուգադիպումը շատերի մեջ այն համոզումն է առաջացրել, վորպես թե արմիրությունների ներկա գրությունը միայն նոր անտեսական քաղաքականությունից է բղխում, նրա անմիջական հետևանքն է հանդիսանում: Այս անսակետի վրա կանգնած ընկերները սպասում են յերեկ, վոր աչն որը, յերբ նոր անտեսական քաղաքականության սչ-ցանկալի կողմերից հրաժարվելու հնարավորություն կստեղծվի, արմիրություններին ու նրանց տեղկոմներին էլ իրենց նախկին ֆունկցիաները նորից կվերադարձնվեն: Սա մի շավաղանց սխալ ու փաստաբանական է: Յեթե նոր անտեսական քաղաքականությանը չանցնեցինք էլ, միություններն ու տեղկոմները իրենց նախկին ֆունկցիաները պահպանել չէլին կարող, վորովհետև դա կնշանակեր արդյունաբերության և հողորդակցության միջոցների մշտական հիվանդ գրություն, նրանց քայքայում: Տեղկոմների գործունեության ներկա շրջանակները խորհրդային իշխանության ու ժողայցման ու

հեղափոխութեան հաղթանակի հետեանք են հանդիսանում
 և մեր անտեսական կյանքի վերականգնման նախապայմանը
 կազմում: Ամեն մի պրոֆեսիոնալ գործիչ ու ամեն մի
 կոմունիստ պետք է իրանց պարզ հաշիվ տան այդ հարցում
 և գիտակցեն, վոր պրոլետարիատի միջազգային հեղա-
 փոխութեան հաղթանակից հետո ել, կազմակերպված
 սոցիալիստական հասարակութեան մեջ, տեղկոմներն ու
 առանձին միութիւնները չեն կարող և իրավունք չեն
 ունենա մեր անտեսական կյանքին այն չափով միջամտե-
 լու, ինչ չափով այդ տեղի ունեւր մինչև 1921 թվի գա-
 րունը: Սոցյալիստական հասարակութիւնը խոշոր մեքե-
 նայական արտադրութեան վրա է հենվելու, իսկ մեքենան
 կենտրոնացում է պահանջում:

Տեղկոմային յերազներով կարող են սնվել միայն
 մանր բուրժուական անարխիստները կամ նրանցից վոյ
 պակաս մանր բուրժուական՝ սոցիալիստ-հեղափոխա-
 կանները:

**ԿԱՐՄԻՐ ԱՐՋՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՈՄԱՆ ԱՐ-
 ՏԱԳՐՈՂԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆԵՐ:**

Ինչպես վերև հիշեցինք, իբեւց գործուներութեան
 սահմանափակ շրջաններում ել տեղկոմները մեզ մոտ
 անչափ խոշոր դեր ունեն կատարելու: Առանց նրանց
 աջակցութեան, միութեան արդյունավետ աշխատանքն
 անհնարին է: Կարելի է ասել, վոր Խորհրդային կարգերում
 նրանց գոյութիւնը պարտադիր է: Առանց նրանց աջակ-
 ցութեան, միութիւններն անգոր են կատարելու իրանց
 վրա ծանրացող թե զուտ միութենական և թե պետական
 ֆունկցիաները: Տեղկոմների յեվ նրանց շուրջը կազմա-
 կերպած բանվորների միջոցով է, վոր մեր միաբնու-
 ները յայն մասնայական կազմակերպութիւններ են
 գառնում, Խորհրդային Իշխանութեան ամուր սյուներից

մեկը կազմում և կոմունիստական կուսակցութեան ուժե-
 դացման անսպառ տղբուր հանդիսանում:

Գործարանային կոմիտեները կազմակերպում են ի-
 րենց շուրջը ավյալ ձեռնարկի բոլոր բանվորներին ու
 ծառայողներին, անկախ նրանց արհեստից: Ամեն մի գոր-
 ծարանում տեղի ունեցող այս փոքրիկ փաստը բանվո-
 րական շարժման համար ամենամեծ հետևանքներն ունի:
 Բանվորների շտնը պահանջում է, վորպեսզի գործարա-
 նում մի կոմիտե լինի, և այդ կոմիտեն մի տեղից, մի
 միութիւնից հրահանգներ ստանա: Այլ կերպ բանվոր
 դասակարգի կազմակերպման ու նրա կովի լծակը հան-
 դիսանալու փոխարեն, կոմիտեն ակտիվ ու հետևողական
 աշխատանքի անընդունակ մի մարմին կդառնա և լավա-
 դույն զեպրում խոսարանի կվերածվի: Անա ինչու վոյ
 միայն ավյալ գործարանի, այլ և արդյունաբերութեան
 միջոցով ճյուղի բոլոր բանվորներն ու ծառայողները մի և
 միութեան մեջ են մտնում: Գրանուլ ակեն մի-
 բանվոր ու ծառայող սկսում է նախաճի իրան պրոլե-
 տարական մեծ ընտանիքի ակտիւ, դասակարգային հողի
 փառ և կանգնում յեվ այլ յեպի յի գգում իրան յոկ վոյ-
 պես վաչսագործ, մեքայագործ, հացբուս, կոշիկակար,
 տաւցիչ, գրասեւեյակային ծառայող, դռնապահ ել այլն:
 Իրանով մեծ գարկ է արվում մանավանդ ստորին ծառա-
 յողների ու վորոշ արհեստից զուրկ բանվորների կազմա-
 կերպման գործին: Մետաղագործների միութեանն որի-
 նակ ընդունում է իր չարքերը վոյ միայն մետաղի վրա
 աշխատողներին, այլ և արդյունաբերութեան այլ ճյու-
 դում աշխատող փայտագործներին, այսպես կոչված օւ-
 աշխատանք կատարող բանվորներին, քիմիկոսներին, հաշ-
 վապահներին, գրասենյակային ծառայողներին, թղթա-
 տարներին, բժիշկներին ու ինժեներներին և անխախ-
 աջ բուրժին, ով բանվորին ընդունելու և նրան արձակե-

լու իրավունք չունի: Մորհրդային հիմնարկներում ու
 ձեռնարկներում աշխատող վերջին կարգի ծառայողներն
 ել կարող են միութեան անդամ գրվել, յեթե տվյալ հիմ-
 նարկի կամ ձեռնարկի բանվորների ու ծառայողների
 ընդհանուր ժողովը նրանց այդ ցանկությանը դեմ չի
 արտահայտվում, այսինքն յեթե իրենց ադմինիստրատիվ
 իրավունքները նրանք ի չարը չեն գործադրում, միութ-
 յունների բոլոր կաթաղարկությունները և աշխատանքի
 պաշտպանության որենքները խստիվ կատարում են և
 բանվորների ու ծառայողների հետ ընկերական հարաբե-
 րություններ են ստեղծում: Մորհրդային հիմնարկների
 ու ձեռնարկների անխտիր բոլոր վարիչները, բոլոր պա-
 տասխանատու ծառայողները միություններին անդամա-
 գրվելու իրավունք ունեն, յեթե նրանց անձնական հաս-
 կությունները դրան չեն խանգարում: Ժողովրդական
 անտեսության խորհրդի նախագահն, սրինակ, վորը մեք
 գործարանային արդյունաբերության ընդհանուր ղեկա-
 վարն է հանդիսանում, վոչ միայն կարող է անդամա-
 գրվել Մորհրդային ծառայողների միութեանը, այլ սովո-
 բաբար միությունների խորհրդի նախագահության ան-
 դամ է: Փաստորեն ել նրանք միությունների նախագա-
 հությունների անդամ են թե Հայաստանում և թե Ռու-
 սաստանում: Այլ կերպ չեք ել կարող լինել, բանի վոր
 պատասխանատու խորհրդային գործիչները խորհուրդների
 համագումարների և նրանց գործադիր մարմինների ըն-
 տրյալներն են, նրանց կատարյալ հավատն են վաչելում
 և աննորմալ ու անընտան կլիներ, յեթե բանվոր դա-
 սակարգի խառնուրդները մեկին պատասխանատու պեսա-
 կան պատժան հանձնելին, իսկ միեմնույն բանվոր դա-
 սակարգի միությունները նրան անդամագրելուց հեռ-
 ժարվելին, այսինքն նրան բանվոր դասակարգի թշնամի
 հայտարարելին: Մորհրդային կարգերի անչափ մեծ ար-

ժեքը հենց նրանում է կայանում, վոր բանվորությունը
 մեզ մոտ մի ամբողջություն է կազմում, վոր նրա բո-
 լոր դասակարգային կազմակերպությունները գործում են
 լոր դասակարգային կազմակերպությունները գործում են
 ձեռք ձեռքի տված, մի և նույն ուղղությունով, մի և նույն
 ծրագրով: Մենք չունենք առանձնացած ու կղզիացած
 կամունիստական կուսակցություն, Մորհրդային իշխանու-
 թյուն և արհեստակցական միություններ: Ինչպես վերև
 մասնանշեցինք, նրանք բոլորը միևնույն բանվոր դասա-
 կարգի որդանները, նրա շահերի պաշտպանները, նրա ա-
 զատագրական կուլի ղեկավարներն են հանդիսանում: Ա-
 հա ինչու մեք ժողովրդական բոլոր կամիսարները կամու-
 նիստական կուսակցության անդամներ են, շատերը նրա
 կենտրոնական կամիստի անդամներ և նրանք բոլորը, այդ
 նույն պատճառով, կարող են Մորհրդային ծառայողների
 միութեանն անդամագրվել: Բուրժուական յերկրների մի-
 նիստարների ու բանվորների համար նման յեղբայրությունն
 ու հավասարությունը անհնարին և ի հարկե: Նրանք
 սարքեր դասակարգերի ներկայացուցիչներ են և միմի-
 յանց դեմ միայն կուլի կարող են, միմիանց կամիսարը,
 նը ձգտել: Այն ինչ մեզ մոտ ժողովրդական կամիսարը,
 նրա գրագիրը, նրա դոնապահն ու կառապանը կարող են
 միևնույն արհմիութեան անդամներ լինել և փաստորեն
 նրանք բոլորն ել միությունների անդամ են:

Հարցը վերջնականապես պարզելու համար բերենք
 յերկու որինակ ել վնչ բանվորական միությունների
 կյանքից: Վերցնենք սոցիալիստի և գեղաշխի միություն-
 ները: Նրանցից առաջինում կարող են անդամագրվել
 Լուսժողկոմը, Լուսժողկոմատի բարձր պաշտոնյա-
 ները, գրասենյակային աշխատակիցները, սենյակ մաք-
 բողները, բոլոր կարգի ուսուցիչները, գլխավոր բոլոր
 մյուս ծառայողները, վորբանոցի վարիչը, խոհարարն ու
 ուսուցիչանը, գրագրամանների, ընթերցարանների, թանկա-

բանները և ակումբների անխտիր բոլոր աշխատակիցները, լուսժողովմանի հիմնարկներում մշտապես աշխատող ատաղձագործը, ինժեները, բժիշկը և այլն և այլն: Կազմակերպչական նույն պատկերին ենք հանդիպում և գեղաշխի միութեան մեջ, ուր մանուկ են գերասանը, նկարիչը, բուսափորը, ատաղձագործը, մանտորը, գրասենյակային ծառայողը, կասիլը, կոշկակարը, գերձակը, պարիկմախերը, ընթույշ յերգչուհին, նրբակազմ ջութակահարը և մի շարք այլ արհեստների ու արվեստների ներկայացուցիչներ, վորոնցով այնքան հարուստ են մեծ թափոնները:

Կազմակերպել միութեանները ըստ արհեստի ու մասնագիտութեան, ըստ պրոֆեսիայի՝ նշանակում են նրանց արյունաքամ անել, ուժեղանալու և կույեղու հնարավորութեանից զրկել, նշանակում են Ալլահվերդու հանքերի՝ յերկաթուղու, «Արարատ» գործարանի, մեխանիքական գործարանի բանվորներին մի շարք միութեանների վրա բաժանել, իսկ հիվանդանոցի, վորբանոցի կամ թատրոնի աշխատակիցներին փաստորեն արհեստակցական շարժմանը մասնակից չանել, վորովհետև վերջիններս ցրվելու են բոլոր միութեանների մեջ, վորոնցից և վոչ մեկը տվյալ հիմնարկության բոլոր աշխատակիցներին կազմակերպելու նրանց շահերը հոգալ չի կարող: Այդ պատճառով էլ արևմտյան միութեանները ձգտուու են կազմակերպվել ըստ արտադրութեան ճյուղերի, համաձայն վերոհիշյալ սխեմայի: Խորհրդային յերկրներում—նրանց թվում և Խորհրդային Հայաստանում—բոլոր միութեաններն արդեն հրաժարվել են իրենց կազմակերպութեան նեղ պրոֆեսիոնալ շրջանակներից և վորպես իրենց կազմակերպության հիմք առնալով արհեստագրական սկզբունքն ընդունել, այսինքն լայն դասակարգային հողի վրա յեն կանգնել, վոր նրանց վոչ միայն կույի, այլ յեվ սեղծագործա-

կան աշխատանքի ամենամեծ ննարավորություններ և սալիս:

ՄԵՐ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԱԳՐՈՂԱԿԱՆ ԵՆ ՎՈՉ ՄԻԱՅՆ ՐՍՏ ԻՐԵՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՅԵՂԱՆԱԿԻ ԱՅԼ ՅԵՎ ՐՍՏ ԻՐԵՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ

Կապիտալիստական յերկրների միութեաններին կազմակերպութեան արտադրողական սկզբունքը հարկավոր է զլխավորապես նրա համար, վոր միութեանները մասսայական դասակարգային կազմակերպութեանները վերաբերելով են՝ իշխող դասակարգերի դեմ մղվող կռիվը ավելի ամուր հիմքերի վրա դնելու համար: Խորհրդային յերկրներում այդ կռիվը արդեն պատմութեան առարկա է կազմում և նման հոգսերից մձր միութեանները կատարելապես ազատ են: Սակայն, մեր միութեանները կատարելապես ազատ են: Սակայն, մեր միութեանները անմար կազմակերպութեան արտադրողական սկզբունքը անհամեմատ ավելի մեծ նշանակութեան ունի, քանի վոր, պրոֆեսիոնալ հողի վրա կազմակերպվելով, նրանք կատարելապես անընդունակ կգառնան լուծելու իրենց առաջ դրած խոշորագույն յնդիքը— Խորհրդային իշխանութեան հետ ձեռք ձեռքի տված կազմակերպելու վերաբերյալ յերկրի տնտեսութեանը և այդ իշխանութեան գործունեութեան բոլոր ասպարեզներում նրա հենարանը հանդիսանալ: Հետևապես, Խորհրդային յերկրների միութեանները արտադրողական միութեաններ են վոչ միայն ըստ իրենց կազմակերպչական յեղանակի, այլ և— վոր ամենակարևորն է— ըստ իրենց աշխատանքի, ըստ այն պարտականութեանների, վոր դնում են նրանց վրա բանվոր դասակարգը իր դիկտատուրայի շրջանում: Կազմակերպութեան արտադրողական սկզբունքն է միայն, վոր Խորհրդային աշխարհի բանվորութեանը հնարավորութեան

և ապիս կովելու միջազգային կապիտալի դրոշի դեմ, բարձրացնելու իր նյութական ու բարոյական մակարդակը և պետական կյանքի բոլոր ասպարեզներում շինարարական աշխատանքով զբաղվելու: Իրենց կազմակերպութեան յեղանակով ու իրենց ամբողջ աշխատանքով մեր միությունները արճեստի կամ պրոֆեսիոնալի հետ փոչ մի անջուլթյուն չունեն և արճեստակցական կամ պրոֆեսիոնալ են կոչվում միայն ավանդորեն, ըստ հին սովորութեան: Մեր միությունների ելութեանն անձանոթ բանվորական մասսաների համար հին «պրոֆեսիոնալ» բառն ավելի հեշտ ըմբռնելի է, քան «արտադրողական» անունը: Ժամանակի ընթացքում, յերբ բանվորական մասսաները միությունների կյանքին ավելի ակտիվ ու ավելի մոտիկ մասնակցություն կունենան, նրբանք գործի վրա կատենեն ու կհամոզվեն, Վոր մեր միություններն արտադրողական կազմակերպություններ են: «Արճեստակցական» կամ «պրոֆեսիոնալ» անունը ինքն ըստ ինքյան մեր բառարանից կանհետանա՝ բնական ճանապարհով, առանց վորևիցե թելադրանքի վերեկից:

ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԵՅՈՒԹՅՈՒՆՈՒ ԲԱՆՎՈՐԻ ՅԵՎ ԻՆՏԵԼԻԳԵՆՏԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՇԽԱՏԻ ՎՐԱ

Հոկտեմբերյան հեղափոխութեան ազդեցութեանը բանվոր դասակարգի ու նրա միությունների վրա այդքանով դեռ չի սահմանափակվում: Մեծ հեղափոխութեան հնոցից դուրս յեկած ու նրա յետոյ կախապում ձեկակերպված արտադրողական միությունները անշարի մեծ փոփոխումներ առաջացրին նաև բանվորի ու ինտելիգենտի հոգեկան աշխարհում: Մինչ հոկտեմբերյան հեղափոխութեանն ով եր տեսել կամ լսել, Վոր միևնույն միութեան մեջ, իրար կողքի, նստեն ու աշխատեն կամիսարն

ու նրա կառապանը, գործարանի վարչութեան նախագահըն ու այդ գործարանի բանվորը, հիփանդանոցի կամ պորոցի վարիչն ու այդ նույն հիփարիների ծառան, գրքասենյակային մաքուր որիյորդներն ու ազախենները, պճամուլ գերասանուհին ու նրա դերձակուհին: Հոկտեմբերյան հեղափոխութեանը փոչ միայն տնտեսական-քաղաքական, այլ և համաշխարհային բնույթ կրող ընդհանուր կուլտուրական մի փոփոխիկ էր, Վոր մարզկանց հոգու վրա իր ամուր կիբբը դրեց, մեր բոլոր բարոյական հասկացողությունների վրա անսահման խոր ազդեցութեան թողնելով: Մեր մեծ հեղափոխութեան հետևանքով է, Վոր վերացավ բանվորական արտադրողական: Նրա հետեվանքով է նույնիսկ, Վոր ջնջվեց բանվորի ու ծառայողի, բանվորի ու ինտելիգենտի միջով բնկած անդունդը: Ել չենք խոսում այն մասին, Վոր շինովիկութեանն ու ծառայութեան մեջ աստիճաններ ձեռք բերելու ախտը իսպառ զոլորչիացան: Խորհրդային յերկրներում ամեն Վոր ձգտում է այսօր իրան բանվոր հայտարարել, միութեան անդամ դառնալ: Յեկ յերբ միությունների ջարուզումները մերժում են անգամագրեկ մարդկանց, Վոր նրբ իրենց սոցիալական գրութեանը միութեան հետ փոչ մի անջուլթյուն չունեն կամ բանվորութեան շարքերից արտաքսված են, ի պատասխան սովորաբար դառն գանդատներ են լսվում: «Սիր յես ել բանվոր եմ» զբա մենք բանվորից ինչով ենք զանազանցում: Բանվորն այժմ յերկրորդ թե յերրորդ կարգի ջարդարացի չե, ինչպես այդ մինչ հոկտեմբերյան հեղափոխութեանը տեղի ուներ: Այսօր նա փոչ միայն սգափում է ամենաբարձր ջարդարական իրավունքներով, այլ և սժարված է իր մարդկային արժանապատութեան բարձր գիտակցութեանով: Մյուս կողմից, հեղափոխութեանը հետևեց պաշտակային ու ինտելիգենտի թեկերը, նրանց հաս-

բակական ամբարտաժանութեան ու զոտոյ բնավորութեան վրա ծանր խաչ դրեց:

Կյանքի տնտեսական ու քաղաքական ասպարեզներում հաստատվող հափասութեանը լուժեղ կերպով անդրադարձած և մարդկանց հոգեկան աշխարհի վրա: Կարմիր արտադրողական միութիւնները դեմոկրատիզմի խոշորագոյն գպրոցն են հանդիսանում վոչ միայն իրավունքների ու պարտականութիւնների ասպարեզում, այլ և մարդկային արժանապատվութեան ու բարոյական աշխարհին վերաբերյալ հարցերում: Սեզ աշխատանք կատարող բանվորն ու խոհարարուհին, փականագործն ու ինժեները, բժիշկն ու ֆելդշերը, կինն ու ազամարդը, հասակավոր ու յերիտասարդ բանվորը, հայն ու թշուրքը, քրիստոնյան ու մահմեդականը արտադրողական միութիւնների մեջ մի ընդհանուր հայտարարի են բերվում — *Նրակի սորուսի սրսադրսղական միուրքյակն ու խոհերդայիսի հակրայեսուրքյակն հարխարստ աճիլամներ, աշխատանքի ներկայացուցիչներ են:*

Միայն հոկտեմբերյան հեղափոխութեանն էր վիճակված տառել այս մեծ պատմական հաղթանակը, վորի մասին հազարավոր տարիներ շարունակ յերազել և տանջված մարդկութեանը:

ԱՐՏԱԿՐՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՈՐԺՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՐԻՏՈՐՅԱԼ ՆՐՁՆԱԿՆԵՐԸ

Այժմ անցնում ենք միութիւնների կազմակերպութեանը վերաբերյալ վերջին խոշոր հարցին, վորը միջազգային արհեստակցական շարժման առաջխաղացման համար հափազանց կարեւոր նշանակութիւն ունի: Սոսքը վերաբերում է արտադրողական միութիւնների գործունեութեան տերիտորյալ շրջանակներին:

Ինչպես քաղաքական կուսակցութեան, այնպես էլ արհեստակցական միութիւններէ կազմակերպչական ձեւն ու յեղանակը պայմանավորվում են նրանց առաջ դրած նպատակներով, նրանց մղած աշխատանքի բովանդակութեանով: Վերջինիս մեջ տեղի ունեցող փոփոխութիւններն անմիջապէս անդրադառնում են կազմակերպութեան յեղանակի վրա: Մեր միւրքյուններէ առաջ դրած կիսկակակ խնդիրը սրղիսուրքասի դիկսասուրքայի հաստատումն յեզակիսուրքյակն կազմակերպումն ևն հակըիսուսումն: Սուսնձին յերկրներում տեղի ունեցող պրոլետարական հեղափոխութեանները շեն կարող վերջնական հաղթանակի հանգել և իրենց ձեռք բերած դիրքերն ապահովված համարել, յեթե այդ հեղափոխական շարժումները յերկար ու ձիգ տարիներ շարունակ կղզիացած մնան, յեթե պրոլետարիատի միջազգային շարժումը նրանց ոգնութեան շհանի: Պրոլետարական հեղափոխութեանը վոչ առւսական է և վոչ դերմանական, այլ միջազգային բնույթ է կրում: Պրոլետարիատի դասակարգային — հեղափոխական տեսակետի վրա կանգնած ամեն մի արտադրողական միութիւն այդ նպատակի իրականացմանն է յենթարկելու, նրան է հարմարեցնելու իր ամբողջ աշխատանքն ու իր կազմակերպութեան յեղանակը:

Նույնպիսի միջազգային բնույթ է կրում և կապիտալիստական արդյունաբերութեանը, վորի հետ կապված է բանվոր դասակարգը: Չկա և չի կարող լինել վոչ առանձնացած գործարան, վոչ արտադրութեան մի կղզիացած ճյուղ և վոչ աշխարհից կտրված մի կապիտալիստական յերկիր: Գործարանային արդյունաբերութեան ուժեղացումն ու տարածումն յենթապրում են միջազգային կապերի, համաշխարհային շուկայի կերպ գործարանային արդյունաբերութեանը թե իր ներկա կապիտա-

լիստաական կեղեփով և թե ապագա սոցիալիստական հասարակութեան մեջ արյունաքամ կլինի և հիւսիզով: Տըն-
 ճեռարքան այս պահանջը պետիստիաոսի ֆալսախալան ու
 առնեսակցական կազմակերպութեան հիմնի և կազ-
 ման: Այս հարցով ներքազալի և Ամերիկայի արհմիու-
 թյունները շատ քիչ են զբաղվում, քանի վոր սոցիա-
 լիստական նեղափոխութեանն ու անտեսութեան կազմա-
 կերպումը նրանց գործունեութեան շրջանակներին մեջ չեն
 մտնում կամ այդ գործունեութեան մեջ յերկրորդական
 ու յերրորդական տեղ են բռնում: Մեր արտադրողա-
 կան միութեանները ներկա դեպքում ել միանգամայն
 ուղիղ ճանապարհի վրա են կանգնած: Իրենց գոյութեան
 շնորհ առաջին քիչ սկսած, նրանք բոլորն ել կազմակերպ-
 վեցին համառուսական մասշտաբով, սակածելով իրենց
 կենտրոնական վարչութեանները: Վերջիններս համապա-
 սաստիան միութեան համառուսական համագումարում են
 քննարկում: Ակա և չի կարող լինել Պետրոգրադի նահան-
 գի կամ Յեկատերինոսլավի նահանգի մեծաղի արդյունա-
 քերութեան, վորը մյուս նագանգների նույն արդյունա-
 քերութեան հետ կապված չլինի, նրանցից կախում չու-
 նենար: Ինչքան վոր մեր արտադրողական միութեաններին
 հիմնական նպատակը արդյունաքերութեան կազմակեր-
 պումն և հանդիսանում, իսկ նահանգային կամ գավառա-
 յին կղզիացած արդյունաքերութեան չկա, միութեաննե-
 րը պետք և համառուսական մասշտաբով կազմակերպված
 լինեն: Այլ կերպ նրանք կհարցեն իրենց արտադրողա-
 կան ելութեանը և պրոֆեսիոնալ միութեանների կվի-
 բածին:

Համառուսական բոլոր արտադրողական միութեան-
 ները գործում են միութեանների համառուսական կենտ-
 րոնական խորհրդի ղեկավարութեամբ (ВЦПС), զորն
 իր կողմից կարմիր արտադրողական միութեաններին ին-

տերնացիոնալի մեջ և մտնում: Վերջինս սկսեց կազմա-
 կերպվել 1920 թվի ամսուր, 1921 թվի հուլիսին ունեցավ
 Մոսկվայում հավաքված իր առաջին կոնգրեսը և 8 քիչ
 հետո, ներկա տարվա նոյեմբերի 15-ին, կժողովի Մոսկ-
 վայում իր յերկրորդ համագումարը:

**ԱՄԵՐԻԿԱՆ ԵՐՏԱԳՐՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԳ-
 ԻԱՏԻՆ ԿԱԶՄԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Պրոլետարական նեղափոխութեան տարածումն կա-
 պիտալիստական յերկրների վրա կարմիր արտադրողա-
 կան միութեանների առաջ նոր ու նոր ստպարեզներ կլ-
 բացի: Դեռ մինչև պատերազմը յերկաթուղին, փոստը և
 հեռագիրը ուժեղ միջազգային կազմակերպութեաններ
 ելին ներկայացնում: Ստանց վագոնը փոխելու, կարելի
 եր Բերլինից Պոլիս գնալ կամ Փարիզից Պետրոգրադ: Հե-
 ոախոսը գործում եր հազարավոր վերատերի վրա, իսկ
 փոստն ու հեռագիրը բառիս ամենալայն իմաստով հա-
 մաշխարհային ելին դարձել: Անգլիայի, Բելգիայի և Գեր-
 մանիայի գործարանները աշխարհիս բոլոր անկուններից
 հում նյութ ելին ստանում, իրենց գործարաններում
 պատրաստած ապրանքները տարածելով ամբողջ յերկրա-
 գնդի վրա Արդյունաքերութեան և հաղորդակցութեան
 միջոցների այս միջազգային ելութեանը սպագա սոցյա-
 լիստական հասարակութեան մեջ ավելի հեռուողական, ա-
 վելի ուժեղ կերպով կարտահայտվի: Նրանց ղեկավարու-
 թյունն ու վարչութեանը նույնպիս կենտրոնացած
 միջազգային մարմինների ձև գրում կլանվին: Նման պայ-
 մաններում Գերմանիայի յերկաթուղու կամ մեծաղի ար-
 դյունաքերութեան բանվորների արտադրողական միու-
 թյունները չեն կարող բոլոր մյուս յերկրների, մանա-
 վանկ հարևան յերկրների համապատասխան միութեան-

ների հետ կապ չհաստատել ու նրանց հետ համերաշխ չդործել: Պետք է յենթադրել, Վոր ապագա սոցիալիստական հասարակութեան մեջ արտագրութեան բոլոր խոշոր ճյուղերը մի կենտրոնից կը կառավարվեն և Վոր հետեւապես համապատասխան միութեաններն էլ իրենց միջազգային կազմակերպութեանը, իրենց միջազգային կենտրոնն են ստեղծելու: Կարմիր արհմիութեանների Ինտերնացիոնալի հետ միասին և նրան զուգընթացաբար կկազմակերպվեն առանձին արտադրական միաբնակները միջազգային կենտրոնների, նրանց արտադրական ինտերկոնցիոնալների: Միաժամանակ, ամեն մի յերկրում ստեղծվում է բոլոր արտադրողական միութեանների մի ընդհանուր ղեկավար մարմին, մի խորհուրդ յենթադրենք, Վորը մտնում է որտաղ: սղական միութեանների Ինտերնացիոնալի մեջ:

Ի՞նչ գիրք են բռնելու այդ հարցում Հայաստանի միութեանները:

Ն. Ս. Խ. Ն. ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՂՉՔԼՅԻՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր արհեստակցական շարժումը Ռուսաստանի արհեստակցական շարժման ծնունդ է և իր ծագման հենց առաջին որից ընդունեց Ռուսաստանի շարժման սկզբունքները, նպատակներն ու կազմակերպչական յեղանակները: Մեր ամբողջ ուժը զբաղվում է կայանում և առանց չափազանցութեան մեջ ընկնելու կարող ենք ապել, Վոր յիսկիև Ռուսաստանի արհմիութեանների ազդեցութեանն ու ոգևորչանքը, մեր արհեստակցական շարժումն ամենաարշիւն փնտրի մեջ կցճեվոր, մակափանկից վերաբերում է շարժման սկզբունքային ու գաղափարական կողմերին: Սորհրդային Հայաստանի արհեստակցական շարժման ամենազրապական կողմերից մեկն էլ այն

է, Վոր մեր բանվորութեան շարքերում նացիոնալիզմի, թթու ազգասիրութեան վորեյե նշաններ չեն նկատվում և այդ դժբախտութեանից մեր միութեանները կատարելապես ազատ են: Մեր միութեանները շատ լավ են գնտակցում, թե իրենց ուժի աղբյուրն ուր է փնտրելու: Միաժամանակ, նրանք այն էլ են գնտակցում, Վոր Հայաստանը գործարանային արդյունաբերութեանից զուրկ, անտեսապես հետամնաց և չնչին բանվորութեան ունեցող մի յերկիր է, ուր արհեստակցական շարժման ուժեղացման ու ծափարման համար առ այժմ լուրջ ավայաներ չկան: Մեր արդյունաբերութեան, մեր ֆինանսների ու առևտրի փնտրելու կախված է ամբողջովին այն փոխաբերութեաններից, Վոր այդ ստպարեզում Հայաստանի Սորհրդային իշխանութեանը հաստատում է Սորհրդային Ռուսաստանի և Անգրկովկասյան յերկու հանրապետութեանների հետ: Մեր անտեսական կացութեանը զրկում է մեզ սեփական յերկաթուղի և սեփական դրամ ունենալու հնարավորութեանից. Այդ ստպարեզներում գործը անգրկովկասյան և համառուսական հողի վրա յեզրվում: Մեփական ուժերի վրա միայն հենվելով, հնարավոր արտաքին վտանգի դեմ մենք անզոր կլինենք կրվելու: Այստեղից հետևում է, Վոր մեր կարմիր բանակի կազմակերպման ու արտաքին քաղաքականութեան հարցերում Սորհրդային Հայաստանի իշխանութեանը ուժից ճանապարհի վրա յե կանգնած, Անգրկովկասյան հանրապետութեանների և Սորհրդային Ռուսաստանի հետ վորտը համաձայնութեան գալով, նրանց հետ ձեռք-ձեռքի տված դործելով:

Պարզ է, Վոր նման անտեսական ու քաղաքական պայմաններում արհեստակցական միութեաններն էլ համապատասխան չափով թույլ են լինելու և կարող են

փառքի կանգնել միայն Ռուսաստանի միությունների ա-
ջակցութեամբ, նրանց զեկափարութեամբ:

Մեշյակեական սևապարծարքյունից յեզ շափկերգի
տալից ազատ սեր միարքյունները իրենց միջազգային
կապերը հաստատելու գործը հույն հողի վրա յնև դնում,
ևնց յիվ մեր խորհրդային իշխանարքյունը: Մեր բոլոր
միություններն ընդունում են Ռուսաստանի համապա-
տասխան արտադրողական միությունների զեկափարու-
թյունը, մասնակցում նրանց համագումարներին և նը-
սանց կենտրոնական վարչությունների հետ նույն հարա-
բերություններն են ստեղծում, ինչ և Ռուսաստանի մի-
ությունների նահանգային մարմինները: Այդ նույն կար-
գով, Հայաստանի միությունների խորհուրդն էլ վոչ թե
անմիջապես և կարմիր միությունների ինտերնացիոնալի-
տե՞ մտնում, այլ **ВЦПС**-ի միջոցով: Մեզ վոչ վոք չե-
խանգարում Պրոֆինտերնի հետ անմիջական կապեր հաս-
տատել և—ինչպես կասեցին մեշյանները— «անկախ լինել»:
Սակայն, «անկախ» բառին մենք չենք կարող գոհաբերել
մեր միությունների ու բանվորութեան վիճակը, նրանց
խսկական և վոչ ձևական անկախությունը:

Մորհրդային Հայաստանի բանվորն ու գյուղացին մի
գարմանալի գիտակից ու հեռատես վերաբերմունք են
դույց տալիս դեպի մեր Մորհրդային իշխանութեան ար-
տաքին քաղաքականությունը, մանավանդ ինչ վերաբե-
րում և Անգրիզիկասյան ֆեդերացիային և Ռուսաստանի
հետ ունեցած հարաբերություններին: Մեր արհմիու-
թյունների միջազգային դրոթյունը վարոշելու հարցում
ել Հայաստանի բանվորությունը նույնքան զգաստ ու
հեռատես և, պատասխանատվութեան զգացմունքով նույն-
քան սժտված: Միարքյուններ հ ներքին ու արհմիու-
րոքյունները մեր ըսնվորական մասնակց կարողակում և
բոխեցնել յերևի սպրած ներքին ու արհմիու-
րոքյուններին:

**ՄԵՐ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱՐԱՆՆԵՐԸ ՀՈԿՏԵՄ-
ԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒԹՅՈՒՆ ԾՐԻ ՏԵՐԵԿԱՐԶԻՆ**

Հոկտեմբերյան հեղափոխությունը մի իսկական
հարմարություն էր նույն իսկ առաջնակարգ կապիտալի-
ստական յերկրների բանվորութեան ու նրա արհեստակ-
ցական շարժման համար: **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՄԱՆ ՀԵՏԱ-
ՄՆԱՅ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍՍԱՆՆԵՐԻ ԱՌԱՋ ՆԱ-
ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՀՈԳԵԿԱՆ ՎԵՐԱԾՆՆԵՐԻ
ՄԻ ՆՈՐ ԴԱՐ ԲԱՅՆԵՑ:**

Հոկտեմբերյան հեղափոխութեան հինգյերորդ տա-
րեղարձի որը Հայաստանի փոքրաթիվ բանվորությունը
կարող է հպարտանալ նրանով, վոր այս կարճ ժամանա-
կամիջոցում— ընդամենը յերեու տարվա ընթացքում—
նրան հաջողվեց կազմակերպել իր արհեստակցական մի-
ությունները, վորոնց մեջ արձանագրված է մեր բան-
վորութեան մոտ 90 տակտը, հաջողվեց լուծել մեր շար-
ժման սկզբունքային ու տակտիկական հարցերը, մեր
միությունների գործունեութեան շրջանակներն ուրվա-
զծել նրանց աշխատանքը դասակարգային, ուրեմն և մի-
ջազգային հողի վրա դնել և հազարավոր թելերով կա-
պել նրանց Մորհրդային իշխանութեան ու միջազգային
բանվորութեան հետ: Մեր միությունների առաջ գեո-
րազմաթիվ չլուծված հարցեր կան, մանավանդ ինչ վե-
րաբերում է նրանց մասնակցութեանը մեր յերկրի տըն-
ակտական ու կուլտուրական շինարարութեան գործին:
Սակայն և այնպես չի կարելի չընդունել, վոր յերկու
տարվա ընթացքում նրանց կատարած աշխատանքը չա-
փազանց մեծ է, վոր ՄԵՐ ԲԱՆՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՐԳԵՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Ե, ՎՈՐՈՒՄ ԴԱՍԱԿԱՐԳ ՅԵՎ ԻՐ ԴԱ-
ՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՆԿԱՌՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒ-
ԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼ:

Հոկտեմբերյան հեղափոխութեան հինգերորդ օրը
 դարձին Հայաստանի արհեստակցական միութեանները
 իրավունք ունեն հպարտանալու իրենց կատարած աշխա-
 տանքով ու իրենց մասնակցութեամբ այդ մեծ, համաշ-
 խարհային բնույթ կրող ազատագրական շարժմանը, հիմք
 ունեն համոզված լինելու, վոր մոտեցել և արդեն մարդ-
 կութեան վերջնական ազատագրման ժամը և վոր միջոց-
 գային պրոլետարիատի հաղթանակը մի պատմական սն-
 խուսափելիութուն է: Միթե հնարավոր է, վոր փոքրիկ
 աղբատ ու ամեն կողմից հետամնաց Հայաստանում կա-
 տարված հեղաշրջումն տեղի չի ունենա հարուստ ու մեծ
 Հնդկաստանում, կապիտալիստական Մեգլիայում կամ
 Ամերիկայում, հեղափոխական Գերմանիայում և աշխար-
 հիս ամեն մի անկյունում, ուր շահագործումն ու ճնշումն
 են իշխում:

Եւր արհեստակցական բարձունն ամբողջովին չեկ-
 սեմբերյան հեղափոխության ծնունդ է: Իստակարգային
 սեսակեսն ու միջազգային քաղաքականությունը՝ այդ
 բարձունն վոզին, նրա վերջնական հաղթանակի հիմնա-
 կան գրավականը: Չինված այդ գիտակցութեամբ, պրո-
 լետարական հեղափոխութեան հինգերորդ տարեդարձը
 որը մեր արհեստակցական միութեանները հետեվյա-
 նշանաբաններով կհանդիպեն:

- ԿԵՅՅԵ՝ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՌԻՎԸ!
- ԿԵՅՅԵ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՄԵԾ՝ ՀԵՂԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ
- ԿԵՅՅԵ՝ ԹՈՒՍԱՍԱՆԻ ՀԵՐԹՍ ՊՐՈԼԵՏԱՐՅԱՏԸ!
- ԿԵՅՅԵ՝ ԿԱՐՄԻՐ ՊՐՈԳՖԻՆՏԵՐՆԸ!
- ԿԵՅՅԵ՝ III ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼԸ!

«Ազգային գրադարան



NL0205230

24644

331.88(47)

U-22